



ՀՀ Առողջապահության Նախարարության
«Դատաբժշկական գիտագործնական
կենտրոն» ՊՈԱԿ



ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքում երկհարկանի դիախերձարանի
կառուցման աշխատանքային նախագիծ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախաձեռնող

Տնօրեն, Արթուր Մանուկյան



Հայաստանի Հանրապետության
Առողջապահության նախարարության
«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն»
պետական ոչ առևտրային կազմակերպություն
ք. Երևան, Մ.Հերացի 5/1
Հեռախոս՝ (+37410) 567-108
Էլ. փոստ՝ info@formed.am

Խորհրդատու

Տնօրեն; Արայիկ Ծատուրյան



Ծատուրյան Բոնսավրինգ



<https://tsaturyanconsulting.am/>

Mob; (+374) 94 800 877;

E-mail; info@tsaturyanconsulting.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	6
ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	7
1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	11
1.1 Նախաձեռնողի մասին տեղեկություն	11
1.2 Նախատեսվող գործունեություն	13
1.3 Գործունեության տեղակայման վայրը	16
1.4 Գործունեության տարածքի բնութագիր	19
1.5 Հանրային իրազեկում	20
1.6 Սանիտարապաշտպանական գոտի	20
2. ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	22
2.1 Նախագծով նախատեսված լուծումները.	22
2.2 Նախատեսված նյութածախսի ծավալները ըստ նախագծի	23
2.3 Զրամատակարարում և քրահեռացում	27
2.4 Կոյուղի	28
2.5 Ձեռուցում և օդափոխություն	29
2.6 Գազամատակարարում	32
2.7 Հրդեհի ազդարարման համակարգ	34
2.8 Ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ	35
2.9 Շինարարական մեքենաներ և մեխանիզմներ	36
2.10 Շինարարական աշխատանքների ժամկետները	37
2.11 Շինարարական Հրապարակ	38
2.12 Տարածքի բարեկարգում և կանաչապատում	39
2.13 Բժշկական թափոնների կառավարում	39
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ	44
3.1 Ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական բնութագիր	44
3.2 Կլիմա	46
3.3 Աշխարհագրություն	48
3.4 Հողային ֆոնդ և գյուղատնտեսություն	50
3.5 Բնության, Պատմության և Մշակույթի անշարժ հուշարձաններ	52
3.6 Մթնոլորտային օդ	57
3.7 Զրային ավազան	59
3.9 Բուսական և կենդանական աշխարհ	62
3.10 Բնության հատուկ պահպանվող տարածքներ	63
3.11 Հազվագյուտ և անհետացող հատուկ պահպանվող տեսակներ	64
4. ՆԳ-Ի ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	65
5. ՆԳ-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ	67
5.1 Ազդեցության ինտենսիվության և ժամանակի որոշում	67
5.2 Ծահագրգիռ կողմերի հետ աշխատանքներ	70
5.3 Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների ըստ երեք փուլերի՝ շինարարություն, շահագործում, փակման փուլերում	72
5.4 Կումուլատիվ ազդեցությունների գնահատում	75
6. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ և ՄԵԹՈՂԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	77

7. ՊԱՅԱՆՁՎՈՂ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	87
8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	97
9. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ	100
10. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ և ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	103
11. ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	106
12. ԾՄ-Ի ԿՐԱ ՀՆԱՐԱԿՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ և ԿՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆԿԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	108
13. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ	113
ՀԱՎԵԼՎԱԾ 1	116
ՀԱՎԵԼՎԱԾ 2	118
ՀԱՎԵԼՎԱԾ 3	119
ՀԱՎԵԼՎԱԾ 4	126
ՀԱՎԵԼՎԱԾ 5	128
ՀԱՎԵԼՎԱԾ 6	130
ՀԱՎԵԼՎԱԾ 7	131

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք է հանդիսանում դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար: Նախագծով իրականացվելիք աշխատանքների արդյունքում նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին օրենքի հիման վրա:

Հաշվետվությունը ներառում է տվյալներ, հիմնավորումներ և հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրականացման համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող էկոլոգիական ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել և գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և կամ նվազեցմանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

ՇՄԱԳ-ի խնդիրներն են. (i) էկոլոգիական անվտանգության պահանջների և շրջակա միջավայրի վրա ազդեցության սահմանափակումների հիման վրա կայուն զարգացման ապահովումը; (ii) նախատեսվող գործունեության դրական ազդեցությունների պահպանման, վնասակար ազդեցությունների ու դրանց հետևանքների կանխարգելման, նվազեցման կամ բացառման ապահովումը; (iii) արտակարգ իրավիճակների դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության հնարավոր ռիսկերի գնահատումը:

Հապավումներ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ՇՄ	Շրջակա միջավայր
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ԴԲԳԳԿ	Դատաբժշկական գիտագործնական կենտրոն
ԲՍԿ	Բժշկական ստացիոնար կազմակերպություն
ՆԳ	Նախատեսվող գործունեություն
ԲՀՊՏ	Բնության հատուկ պահպանվող տարածք
ԲՄԾ	Բնապահպանական միջոցառումների ծրագիր

Մեթոդաբանություն

Այս նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Գնահատումը և փորձաքննությունը կատարվում են մինչև նախատեսվող գործունեության իրականացումը: Առանց պետական փորձաքննական դրական եզրակացության նախատեսվող գործունեության փաստացի իրականացումը ենթակա է դադարեցման՝ նախատեսվող գործունեությունը փաստացի իրականացնող անձի կողմից նախնական վիճակի վերականգնմամբ:

Փորձաքննության իրականացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու տեղադրությունը և դրանցով պայմանավորված՝ հնարավոր գումարային, ամբողջական ազդեցության աստիճանը: Գնահատման արդյունքով կազմել է հաշվետվություն՝ սույն օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան և ներկայացվում է փորձաքննության:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" Օրենքի հոդված 15-ով սահմանված է Ա կատեգորիայի նախատեսվող գործունեության՝ ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներն են.

- 1) նախաձեռնողի անվանումը և գտնվելու վայրը.
- 2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան
- 3) հաշվետվության ամփոփ բովանդակությունը, որը ներառում է տեղեկատվություն նախաձեռնողի մասին, նախատեսվող գործունեության ոչ տեխնիկական նկարագիրը, իրականացման վայրը, շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և

դրանց մեղմմանն ուղղված միջոցառումների հանրամատչելի, համառոտ նկարագիրը, որոնք պետք է բխեն նախագծային փաստաթղթից.

4) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաև դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը, ազդակիր բնակավայրը և դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի տրամադրած տարածական պլանավորման փաստաթղթերը, իրադրության սխեման կամ քարտեզը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միասնական գեոդեզիական կոորդինատային համակարգով

5) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության նկարագիրը և նպատակը, արտադրական հզորությունները, ֆիզիկական, տեխնիկական և տեխնոլոգիական բնութագրերը, պահանջվող բնական ռեսուրսների, օգտագործվող հումքի ու նյութերի, արտանետումների, արտահոսքերի, թափոնների և դրանց գործածության, արտադրական լցակայանների, ֆիզիկական ներգործությունների նկարագրությունը.

6) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության հնարավոր այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը.

7) նախագծային փաստաթղթով նախատեսված շրջակա միջավայրի հնարավոր տնտեսական, բնապահպանական վնասների գնահատումները, հատուցման ձևը և ժամկետը.

8) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության, ներառյալ այլընտրանքային տարբերակների իրականացման դեպքում շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների, բնական ռեսուրսների, պայմանների հնարավոր փոփոխությունների և դրանց ծավալների նկարագրի առանձին, գումարային և ամբողջական գնահատումը.

- 9) նախագծային փաստաթղթով նախատեսված սոցիալական հնարավոր ազդեցությունները, ռիսկերը, օգուտները, վերլուծական բնութագրերը.
- 10) մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.
- 11) նախագծային փաստաթղթով նախատեսված հնարավոր արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած ռիսկերի գնահատումը, դրանց կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումները
- 12) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կլիմայի հնարավոր փոփոխություններ առաջացնող գործոնները, ներառյալ ջերմոցային գազերի արտանետումները, դրանց բնույթը, ծավալը, ինչպես նաև կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված միջոցառումները.
- 13) հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները
- 14) նախագծային փաստաթղթով նախատեսված բոլոր հնարավոր տարբերակների վերլուծության արդյունքով ընտրված տարբերակի հիմնավորումը՝ շրջակա միջավայրի պահպանության, տնտեսական, սոցիալական տեսանկյունից.
- 15) նախագծային փաստաթղթով նախատեսված բնապահպանական կառավարման պլանը.
- 16) նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը.
- 17) նախատեսվող գործունեության հաշվետվությամբ ներկայացվող տեղեկատվության վերաբերյալ ամփոփ նյութերը, հաշվետվությանը կից ներկայացված քարտեզները, սխեմաները, գրաֆիկները, աղյուսակները՝ նշելով ելակետային տվյալների աղբյուրները.
- 18) շրջակա միջավայրի վերաբերյալ օգտագործված ելակետային տվյալների աղբյուրները
- 19) գնահատման և հաշվետվության կազմման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների, ներառյալ տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները.

20) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) գործընթացը ներառում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի դրույթների պահանջները:

ՇՄԱԳ փուլում իրականացվում են հետևյալ գործողությունները.

- 1) • Գործունեության տեսակի հստակեցում
- 2) • Ազդեցության գնահատում
- 3) • Հաշվետվության կազմում

ՇՄԱԳ գործընթացում ազդեցության գնահատման այս փուլում դիտարկվում են շրջակա միջավայրի ներկա վիճակը և նախատեսվող գործունեության արդյունքում դրանց վրա հնարավոր ազդեցությունները:

1. Նախատեսվող գործունեության նկարագիրը

1.1 Նախաձեռնողի մասին տեղեկություն

Համաձայն ՀՀ Կառավարության 2002թ օգոստոսի 15 թիվ 1242 որոշման ՀՀ Առողջապահության Նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական հիմնարկը վերակազմակերպել է «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության /Կազմակերպություն/:

«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնական գործունեության առարկան և նպատակներն են՝ կենդանի անձանց, դիակների, մարդու օրգանիզմի կենսաբանական ծագման նմուշների և հետքերի, բժշկական փաստաթղթերի, դատաբժշկական, դատահյուսվածքաբանական, դատագենետիկական, դատակենսաբանական, դատակենսաքիմիական, դատաբջջաբանական, դատաքիմիական, բժշկաքրեագիտական, հանձնաժողովային, համալիր, կրկնակի և լրացուցիչ փորձաքննությունների իրականացումը, բժշկության բնագավառում գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացումը՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ում, իրավապահ մարմինների որոշումների հիման վրա, կատարվում են պետության կողմից երաշխավորված հետևյալ փորձաքննությունները.

- կենդանի անձանց դատաբժշկական փորձաքննություն,
- դիակների դատաբժշկական փորձաքննություն,
- դատագենետիկական փորձաքննություն,
- դատակենսաբանական փորձաքննություն,
- դատակենսաքիմիական փորձաքննություն,
- դատաքիմիական փորձաքննություն,
- դատահյուսվածքաբանական փորձաքննություն,
- բժշկաքրեագիտական փորձաքննություն,

- o համալիր փորձաքննություն,
- o հանձնաժողովային և կրկնակի փորձաքննություններ:

Կազմակերպության կենտրոնական գրասենյակը գտնվում է ք. Երևան, Մ.

Հերացի 5/1 հասցեում: ՀՀ բոլոր մարզերում Կազմակերպությանը ունի մարզային բաժիններ: ՀՀ ԱՆ տարվող քաղաքականության նպատակն է մարզային կառույցների կարողությունների մեծացում, որի շրջանականերում իրականացվում է Տավուշի մարզի Բերդ քաղաքի մարզային հիվանդանոցին կից «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային կառույցի համար նոր մասնաշենքի կառուցման ծրագիրը:

Բերդի մարզային կառույցում վերը նշված փորձաքննություններից նախատեսված է իրականացնել միայն կենդանի անձանց և դիակների դատական փորձաքննություն:

ՀՀ ԱՆ ԴԲԳԳԿ-ի դիախերձարան դիակները ընդունվում են միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացրած որոշման հիման վրա, եթե դիակը բերվել է ստացիոնարից՝ բժշկական փաստաթղթերով աշխատանքային ժամերին սանիտարի, իսկ ոչ աշխատանքային ժամերին՝ հերթապահ պահակի կողմից, դիակների ընդունման գրանցամատյանում նշելով ընդունման օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, շտապօգնության բրիգադայի համարը և որտեղից է բերվել: Գրանցամատյանում միաժամանակ նշելով հագուստների և զարդերի առկայությունը, ինչպես նաև գրպանների պարունակությունը՝ շտապօգնության աշխատակիցների ներկայությամբ:

Փորձաքննությունը սկսվում է բուժփրճակագրի կողմից դիակների փորձաքննության համար նախատեսված գրանցամատյանում համապատասխան գրանցումից հետո, նշվում է հերթական համարը, անուն, ազգանուն, հայրանունը, անձնագրային տվյալները, հասցեն, որտեղից է բերվել դիակը: Եթե ստացիոնարից է բերվել նշվում է ստացիոնարի անվանումը, հիվանդության պատմագրի համարը, ում կողմից կայացրած որոշման հիման վրա է բերվել, ժամը քանիսին, նշելով փորձագետի ազգանունը /համաձայն գործող գրաֆիկի/: Փորձագետը ծանոթանալով որոշմանը և բժշկական փաստաթղթերին իրականացնում է փորձաքննությունը կատարելով դիակի արտաքին ուսումնասիրություն մանրամասն նշելով առկա հագուստների վիճակը, վնասվածքները, կեխտոտվածությունը, դիակային փոփոխությունները, առկա

վնասվածքների տեսակները, դրանց տեղակայումները և չափսերը, օտարաձին մասնիկների, քսուկների առկայության դեպքում նշվում են վերջիններիս բնույթը: Անհայտ դիակների դեպքում մանրամասն նկարագրվում են դաջվածքները, սպիները, խալերը դեֆեկտները:

Վերոգրյալից հետո իրականացնում է դիակի ներքին ուսումնասիրություն ըստ օրգան սիստեմների, մանրամասն նշելով նրանց չափսերը, քաշը, եթե կան ներքին օգանների վնասվածքներ, ապա դրանց տեղակայումները, օտար մարմինների կամ պարունակությունների առկայության դեպքում նշում է հայտնաբերման տեղ և նկարագրում օտար մարմինը նշելով չափսերը և պարունակությունների բնույթը: Ախտաբանական պրոցեսների դեպքում վիզուալ նկարագրում է հայտնաբերված փոփոխությունները վերցնում նմուշ /նմուշներ/ հյուսվածաբանական ուսումնասիրության համար: Բոլոր օրգաններից վերցվում են նմուշներ հյուսվածաբանական հետազոտության և արխիվի համար, հետազայում, անհրաժեշտության դեպքում որպիսի իրականացվեն հետազոտություններ անհրաժեշտության դեպքում փորձագետի նախաձեռնությամբ լրացուցիչ կարող են վերցվել նաև կենսաբանական նյութեր՝ դատաքիմիական և կենսաբանական, գենետիկական և բժշկաքրեագիտական հետազոտությունների համար: Փորձաքննությունը ավարտելուց հետո ներքին օրգանները տեղադրվում են դիակի խոռոչներում, դաբաղվում են և վերկանգնում են սեկցիոն կտրվածքները, դիակը լողացվում է և տեղադրվում սառնարանի խցիկում: Փորձաքննությունը ավարտելուց հետո փորձագետը լրացնում է համապատասխան ուղեգրերը, գրացամատյանը և հանգուցյալի հարազատներին է տրամադրվում մահվան փաստը հավաստող բժշկական վկայականի քաղվածքը:

1.2 Նախատեսվող գործունեություն

Նախաձեռնողը՝ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ը, պայմանագրային հիմունքներով, պատվիրել է «Ծատուրյան Քոնսալթինգ» ընկերությանը իրականացնել նախատեսվող գործունեության՝ ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքի Ա. Մանուկյան 25/1 հասցեում դիահերձարանի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և հաշվետվության կազմում:

Նախատեսվող գործունեությունը ըստ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ կետի՝ սանիտարատեխնիկական կառուցվածքների բնագավառում՝ ա. գերեզմանոցներ կամ դիակիզարաններ կամ դիահերձարաններ, պաթոլոգիաանատոմիկներ կամ դիարաններ, դասակարգվում է Ա դասի և ենթակա է գնահատման և փորձաքննության:

Նախատեսվում է Տավուշի մարզի Բերդ քաղաքի Ա.Մանուկյան փողոց 25 հողամաս հասցեում ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ի համար նախագծել դիահերձարանի շենք՝ դիահերձարանով, սառնարանային, գրասենյակային, արխիվային և պահեստային տարածքներով:

Շենքի կառուցման նախագծերում ընդգրկվել են հետևյալ աշխատանքները.

- Տարածքի գեոդեզիական հանույթների իրականացում
- Նախագծվող հատվածի մանրամասն չափագրում
- Կառուցվող երկհարկ շենքի ճարտարապետաշինարարական գծագրերի մշակում
- Կառուցվող երկհարկ շենքի կոնստրուկտորական գծագրերի մշակում
- Ինժեներական ներքին ցանցերի /ջրամատակարարում (տաք և սառը), ջրահեռացում, կոյուղի, էլեկտրամատակարարում, գազաֆիկացում, ջեռուցում, օդափոխություն, օդորակում (ներածման և արտածման), հակահրդեհային ահազանգման ցանց/ մոնիտաժման գծագրերի մշակում
- Մերձակա տարածքի բարեկարգում, ասֆալտապատում՝ 1մ լայնությամբ սալվածքով(отмозка),ցանկապատում

Կառուցվող շենքի ընդհանուր բնութագիր. 12x11մ առանցքային պատերով երկհարկ շենք:

1-ին հարկ, նկուղային սենքերը

1. Աստիճանավանդակ - 11,60 քմ
2. Դիահերձարան - 30.04 քմ
3. Դիահերձարան - 14.85 քմ
4. Սանհանգույց - 2.22քմ
5. Սառնարան - 7,50 քմ
6. Դիակի հանդերձաորում - 9,50 քմ
7. Միջանցք - 23.25 քմ
8. Սանիտարի սենյակ - 10,61 քմ
9. Սառնարան - 7.50 քմ
10. Թեքահարթակ - 8.90քմ

Սառնարանային սենյակը ունենալու է 2 խուց, յուրաքանչյուրը 3 տեղանոց, ջերմաստիճանային ռեժիմը սահմանված է 0-4 աստճ ցելսիուս:

2-րդ հարկ սենքերը

1. Աստիճանավանդակ - 11,70 քմ
2. Սանհանգույց - 5.35 քմ
3. Միջանցք - 17.65քմ
4. Բժիշկի սենյակ - 16.70 քմ
5. Բժիշկի սենյակ - 14.18 քմ
6. Ռեգիստրատուրա - 7.84 քմ
7. Ամբուլատորիա - 10.39 քմ
8. Չոր արխիվ - 5.05 քմ
9. Սանիտարի սենք - 5.05 քմ
10. Սպասասրահ - 15.86 քմ
11. Պահեստ - 2.28 քմ
12. Թաց արխիվ - 4.11 քմ
13. Արտաքին աստիճան - 0.78քմ

Աստիճանահարթակներ և աստիճաններ՝ սալիկապատված առնվազն 3սմ հաստությամբ բազալտե սալիկներով և այլումինե բազլիկներով:

Լուսավորությունը՝ LED տիպի լուսատուներով:

Տանիք՝ ծածկված տրամատավոր ներկված ցինկապատ թիթեղով, 0.55մմ հաստությամբ թիթեղներով, կազմակերպված ջրահեռացումով:

Արտաքին պատեր՝ կանոնավոր կտրվածքի տուֆ քարի շարվածք՝ երեսապատում, 4սմ հաստությամբ տուֆե սալիկներով:

Արտաքին դռներ՝ երկաթյա, երկշերտ, ջերմամեկուսիչ: 1-ին հարկում 2հատ երկփեղկ, 2-րդ հարկում 1հատ միափեղկ:

Լուսամուտներ՝ մետաղապլաստե, ցանցերով, ճաղավանդակներով, բարդ փականներով: Դիափերձարանի լուսամուտների ապակիներն անթափանց (матовые):

Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմված են երկու մասից՝ ճարտարապետաշինարարական մաս և նախահաշվային մաս:

Ճարտարապետաշինարարական մասը ներառում է բացատրագրեր, մասնագրեր, հատակագծեր, քանդման և շինարարության կազմակերպման նախագծեր, աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց:

1.3 Գործունեության տեղակայման վայրը

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը պատկանող՝ Տավուշի մարզի, Բերդ համայնքի, ք. Բերդ Ա. Մանուկյան փողոց 25/1 հողամասում: ՀՀ Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման **N 21082023-11-0010** վկայականի (Հավելված 1) հիման վրա:



Հողամասի բնութագրերը

Կադաստրային ծածկագիրը՝ 11-002-0060-0123

Մակերեսի չափը (հա)՝ 0.02247

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի


Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական
կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոորդինատներ

X	Y
8532747.2931	4528153.5229
8532733.6458	4528154.7229
8532735.4341	4528171.0409
8532749.0722	4528169.8417

Կադաստրային քարտեզ 1



Կադաստրային քարտեզ 2



1.5 Հանրային իրազեկում

ՀՀ կառավարության 1325 որոշմամբ (խմբ. 28.12.23 N 2343-Ն) սահմանված է հանրության իրազեկման և հանրային լուսմների ծանուցման բովանդակությունը, հանրային լուսմների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները:

Սահմանված կարգով, այս նախաձեռնության շրջանակում, Բերդ համայնքում, որի վարչական սահմաններում իրականացվելու է նախատեսվող գործունեությունը, իրականացվել է հանրային լուսմներ 2025թ-ի մայիսի 23-ին: Բերդ համայնքի ավագանին ընդունել է որոշում (Հավելված 3) նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու վերաբերյալ:

Հանրային լուսմների վերաբերյալ Բերդ համայնքի ղեկավարի որոշումը, արձանագարությունը, մասնակիցների ցանկը, հանրային լուսմների ծանուցման մամուլի հրապարակումը ներկայացված է Հավելված 3-ում:

Հանրային լուսմների տեսապատճենները ներկայացված են Հավելված 4-ում:

1.6 Սանիտարապաշտպանական գոտի


Համաձայն ՀՀՇՆ 31-03.07-2024 «Առողջապահական կազմակերպություններ. հիվանդանոցային բուժօգնության (ստացիոնար) օբյեկտների շենքեր և շինություններ»

շինարարական նորմերի, **դատաբժշկական փորձաքննությունը** ՀՀ տարածքում հանդիսանում է բուժօգնության և ծառայությունների տեսակ:

ՆԳ տարածքի տեղակայման քարտեզ սխեմա

Համաձայն նշված շինարարական նորմաների 38-րդ կետի, սահմանված են բժշկական ստացիոնար կազմակերպություն (ԲՍԿ)-ների շենքերի/մասնաշենքերի անհրաժեշտ հեռավորություններն . որտեղ ՆԳ /նախատեսվող գործունեության/ համապատասխանու է 11-րդ կետին՝

- ախտաբանաանատոմիական մասնաշենքն իր ծիսակատարությունների գոտով պետք է նախատեսվի հիվանդասենյակների, բնակելի և հասարակական շենքերի պատուհանների տեսանելիության դաշտից դուրս և ունենա առնվազն 30մ հեռավորություն հիվանդասենյակային բաժանմունքներով մասնաշենքերից, պոլիկլինիկայից և սննդի կազմակերպման մասնաշենքից, հատվածամասից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի հուլիսի 31-ի N11-Ն հրամանով հաստատված N 2-III-3.3.1.-026-12 սանիտարահամաճարակաբանական կանոնների և նորմերի:



ՆԳ /նախատեսվող գործունեության/ տեղակայման հեռավորությունները բավարարում են նորմատիվային պահանջները: Մասնավորապես մինչ Բերդի

բժշկական կենտրոնի մոտակա մասնաշենք հեռավորությունը 200մ է, իսկ մոտակա բնակելի տներից հեռավորությունը 300մ է /տես տարածքի տեղակայման քարտեզ սխեման/:

2. Նախագծի նկարագրությունը

Ծրագրով նախատեսված Տավուշի մարզի Բերդ քաղաքում ՀՀ ԱՆ ԴԲԳԳԿ ՊՈԱԿ-ի համար երկհարկանի դիահերձարանի շենքի կառուցման աշխատանքային նախագիծը կազմվել է Գլխավոր Պրոեկտ ՍՊԸ-ի կողմից 2023թ-ին: Նախագիծը մշակված է ՀՀ-ում գործող նախագծման նորմերին համապատասխան, ճարտարապետական գծագրերի հիման վրա:

ՆԳ տարածք	Գործող մարզային կենտրոն
-----------	-------------------------

2.1 Նախագծով նախատեսված լուծումները.

- Շենքը նախագծված է քարե ինքնակրող պատերով, միաձույլ երկաթբետոնե տարածական շրջանակային հիմնակմախքով 12x11 մ առանցքային չափերով, հիմքերը՝ միաձույլ, երկաթբետոնյա, կապված հիմնային հեծանով:
- Պատերը դրսից սվաղել ցեմենտավազե շաղախով, երեսապատել տուֆե սալիկներով: Հարդարման աշխատանքները կատարել համաձայն հարդարման ամփոփագրի: Նյութերի որակը և գունային լուծումները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ:
- Ծածկը նախագծված է կլորանցքավոր ե/բ սալերից, մասամբ միաձույլ: Տանիքը՝ փայտյա ծալեղնաշարով, ծրարատիպի, կազմակերպված ջրահեռացումով, ծածկանյութը՝ ցինկապատ գունավոր տրամատավոր թիթեղից, ԿՊ 21-0.55 մակնիշի:
- Համաձայն ինժեներաերկրաբանական պայմանների մասին տվյալների հիմք են ծառայում՝ ավազակավեր հետևյալ բնութագրերով՝ $R=2,0կգ/սմ^2$: Գրունտի կարգը ըստ մշակման հավասար է III /33գ/:

- Տեղում հողային աշխատանքների իրականացման ժամանակ, փոսորակները բացելուց հետո, նախքան հիմնային աշխատանքների կատարելը, անհրաժեշտ է գրունտների մասին տվյալները վկայագրել համապատասխան ինժեներաերկրաբանական ակտով և նախագծի հետ համապատասխանության դեպքում նոր իրականացնել հիմնային աշխատանքները:
- Անհամապատասխանության դեպքում անհնարաժեշտ է հիմքերի տակ գտնվող նախապատրաստական շերտը հասցնել մինչև երկրաբանի կողմից տրված գրունտի նիշին:
- Հիմքերի տեղադրման խորությունը ընդունված է -5,10 (պայմանական) նիշի վրա:
- Պատերը ընդունված են հիմնակմախքի լցվածքի ձևով՝ տուֆաքարի շարվածքից:
- Պատերը ուժեղացված են հորիզոնական ցանցերով, ինչպես նաև ուղղաձիգ ամրաններով

Նախագծով կոնստրուկցիաները հաշվարկված են ըստ նրանց կրողունակության, բեռնվածքների հատուկ զուգացման պայմանից: Համաձայն գործող նորմերի ընդունված են հետևյալ բեռնվածքները.

- Սեյսմիկ -1 գոտի, $A=0.3 \text{ g.}$ (9 բալ)
- Ժամանակավոր նորմատիվային -4.0 կՊա
- Ժամանակավոր կարճատև նորմատիվային -1.4 կՊա
- Ձյան նորմատիվային -0.7 կՊա

Նախագծով նախատեսված է հետևյալ նյութերի կիրառումը

- բետոն-ծանր, լցանյութերը - բազալտյա խիճ և կվարցային ավազ:
- էլեկտրոդներ է-42Ա տիպի, ըստ ՍՆԻՊ 9467-82-ի

2.2 Նախատեսված նյութածախսի ծավալները ըստ նախագծի

Հողային աշխատանքներ /3-րդ կարգի գրունտներ/

1. Փոսորակի քանդում էքսկավատորով - 380 մ^3
2. Նույնը ջեռքով-70 մ^3
3. Հողի տեղափոխում-270 մ^3
4. Հողի հետլիցք տոփանումով-180 մ^3 /որից 90 մ^3 ձեռքով/
5. Տարածքի հարթեցում բուլդոզերով 600քմ, 60սմ հաստությամբ

Ասֆալտապատում երկու շերտ /5+3/սմ - 450քմ

1. Ասֆալտապատման տակ 30սմ հողի տոփանում
2. Ասֆալտապատման տակ 15 սմ հաստ խճային գրունտ/40-70մմ/
3. Բետոնյա /15x30/ սմ բորդյուրների իրականացում - 180մ
4. Բորդյուրների տակը՝ հողի քանդում - 8.5 մ³,
5. Բորդյուրների տակ ավազ - 4 մ³,
6. Բորդյուրների տակ բետոն B10 - 7,2 մ³

Հիմնային հեծան

1. Նախապատրաստական շերտ B10 դասի բետոնից - 5.9 մ³
2. Ամրանավորում $\Phi 20A500c$ - 1493.0կգ
3. Ամրան $\Phi 12A500c$ - 105.3 կգ
4. Անուրի ամրան $\Phi 8A$ - 850.0 կգ
5. Բետոն B15 դասի - 26.2 մ³

Հիմքերի սյուներ


1. Ամրան $\Phi 20A500c$ - 240.0 կգ
2. Անուր $\Phi 8A$ - 181.8 կգ
3. Թիթեղ 16 մմ հաստ. - 22.4 կգ
4. Բետոն 20 դասի - 2.2 մ³

Նկուղային հարկի բետոնյա պատեր

1. Ներքին - բետոն 50սմ հաստ /B15դասի բետոնից/ - 34.2 մ³
2. Ա առանցքով - բետոն 50 սմ հաստ /B15 դասի բետոնից/ - 21,0 մ³

Նկուղային հարկի և հիմքերի ջրամեկուսացում երկշերտ իզոգամով - 350քմ

Գլխավոր հատակագիծ



Ուղիղ կտրվածքի 40 սմ. հաստ. պատի իրականացում-132,8 մ³

Երեսապատում 40 մմ հաստ բազալտե սալիկներով, մետ. ցանցով -20 քմ

Երեսապատում 40 մմ հաստ տուֆե սալիկներով, մետ. ցանցով - 245,3 քմ

Երկաթբետոնյա միջուկների /սյուների/ իրականացում

1. Ամրան Փ20A500c - 632,7կգ
2. Անուր Փ8A1 - 310,5կգ
3. Մետ թիթեղ, ներդիր16մմ հաստ - 25,0կգ
4. Բետոն 20դասի - 10,8մ³

Ծածկի Միաձույլ մասեր

1. Ամրան Փ18A500c - 308,0 կգ
2. Ամրան Փ16A500c - 318,0 կգ
3. Ամրան Փ12A500c -681,5 կգ
4. Անուր Փ8A1 - 638.6 կգ
5. Անուր Փ6A1 -770,0կգ
6. Բետոն B20 դասի - 25,5 մ³

Միաձույլ աստիճան

1. Ամրան Փ16A500c - 344,0 կգ
2. Անուր Փ6A1 - 47.98 կգ
3. Բետոն 20 դասի - 2.8 մ³

Հավաքովի ե/բ ծածկ

1. Սալի մոնտաժում - 30 հատ
2. Կլորանցքավոր ե/բ սալ - 209,4 քմ-/39,8տոննա/

Պատերի ամրանավորում

1. Ցանց Յ1 Ամրան Փ6A1 - 318.9 կգ

Բարավորներ

- 1.Ամրան Փ18A500c - 383,5 կգ
- 2.Ամրան Փ8A1 - 169,6 կգ
- 3.Բետոն B20 դասի - 4,7 մ³

2.3 Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարման և կոյուղու նախագիծը կատարված է ըստ ճարտարապետական առաջադրանքի և համաձայն գործող շինարարական նորմերի և կանոնների: Ջրամատակարարման ցանցը միանում է Բերդի ԲԿ-ի ցանցին:

Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների համար նախաձեռնողը դիմել է Վոլիա Ջուր ՓԲԸ-ին քաղաքային համակարգին միանալու տեխնիկական պայմանների ստացման համար: Առաջարկվում է 50մ³ ծավալով խմելու ջրի պահուստային տարողություն:


Նախագծով նախատեսված է.

1. Սառը և տաք կենցաղային, խմելու ջրամատակարարման ցանց:


2. Կենցաղային կոյուղու ցանց:

Շենքի ջրամատակարարումը իրականացվում է գործող ներտարածքային ջրամատակարարման ցանցից. Ներքին կենցաղային-խմելու ջրամատակարարման ցանցը մոնտաժվում է պոլիպրոպիլենային բարձր ճնշման խողովակներից $\Phi 32; 25; 20$ մմ արտաքին տրամագծով: Տաք ջրամատակարարումը իրականացվում է կաթսայից, հատակների մեջ անցկացվող խողովակները մեկուսացվում են "TERMOFLEX" խողովակներով 6 մմ պատի հաստությամբ:

Ջրամատակարարման աքսոնոմետրիկ սխեմա



Ջրամատակարարման և ջրահեռացման սխեմաները գլխավոր հատակագծում




2.4 Կոյուղի

Կենցաղային հոսքերը, ըստ նախագծի, սանիտարատեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծված ներտարածքային արտաքին ցանցի մեջ, որը միանում է Բերդի բժշկական կենտրոնի կոյուղու համակարգին:

Ներքին ցանցը անցկացվում է պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակներից $\Phi 110; 75; 50$ մմ: Ներտարածքային ցանցերը անցկացվում են ծալքավոր կոյուղու խողովակներից $\Phi 160$ մմ: Կենցաղային կոյուղու դիտահորերը ընդունվաց են 1.0մ տրամագծով, երկաթբետոնյա հավաքովի էլեմենտներից:

Կոյուղու աքսոնոմետրիկ սխեմա




2.5 Զեռուցում և օդափոխություն

Զեռուցման և օդափոխության համակարգի նախագծումը իրականացվել է համաձայն գործող շինարարական նորմաների և կանոնների:


- СНиП II -69.78 Лечебнопрофилактические учреждения
- ՀՀՇՆ IV-12.02.01-04 Զեռուցում, օդափոխում և օդի լավորակում
- ՀՀՇՆ 22-01-2024 Շինարարական կլիմայաբանություն
- ՀՀՇՆ II-7.02-95 Շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմաֆիզիկա
- ՀՀՇՆ 24-01-2016 Շենքերի ջերմային պաշտպանություն

Զեռուցման համար նախատեսվում է 32կՎտ և 40կՎտ հզորության տուրբո գազի կաթսաներ:

Ջեռուցման համակարգի սխեման



Ջեռուցման համակարգի աքսոնոմետրիկ սխեմա




Օդափոխության համակարգ

Կառուցվող դիստրիբյուցիոն շենքում իրականացվելու է ներածող և արտածող, ընդհանուր փոխանակային արհեստական շրջանառությամբ օդափոխություն: Ներածող օդի էլեկտրական տաքացման համակարգով:

Օդափոխման ներածող և արտածող ծավալները ընդունվել են ըստ ճյուղային նորմատիվային պահանջների:

ԱՆՆԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱՆՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ				
№	ԱՆՎԱՆՈՒՄ	Չափ	Չ/մ	Քան
ՕԴԱՓՈՆՈՒԹՅՈՒՆ				
1	Ներածման խուց, բաղկացած՝ ա)զտիչ, 500x300մմ բ) օդատաքացուցիչ էլեկտրական, N=10կվտ, գ)օդամղիչ կանալային, L=900մ²/ժ, H=250Պա, դ)պատաս, ցինկապատ պողպատե թիթեղից՝ (600x500x800), ինքնատննվող մեկուսացումով՝ δ=10մմ, F=3,0մ²	-	հմլ	1
2	Կառավարման վահանակ, էկրանով՝ ներածման խցի համար	-	հատ	1
3	Օդամղիչ կանալային(ԱՀ-1), դիստրիբյուցիոն համար (BKK-315)	L=900մ²/ժ; H=300Պա	հատ	1
4	Օդամղիչ կանալային(ԱՀ-2), նկուղի սանհանգույցի և ցնցուղարանի համար (BKK-160)	L=150մ²/ժ, H=200Պա	հատ	1
5	Օդամղիչ կանալային(ԱՀ- 4), առաջին հարկի սանհանգույցների համար(BKK-100)	L=100մ²/ժ,H=200Պա	հատ	1
6	Օդամղիչ առանցքային, առաստաղային (ԱՀ-3), հանդերձավորման սենյակի համար, Ø150	L=100մ²/ժ,H=50Պա	հատ	1
7	Աղմկախցուցիչ խողովակային (ՆՀ-1)	500x150(հ)x1000(L)	հատ	1
8	Օդատար ցինկապատ պողպատե թիթեղից,	δ=0.5մմ	մ²	20
9	Օդատար ցինկապատ պողպատե թիթեղից,	δ=0.6մմ	մ²	17
10	PVC պլաստմասե խողովակ, իր ձևավոր մասերով	Ø150	մ	26
11	Ծախելահարկով անցնող արտածող օդատարների մեկուսացում ֆոլգապատ հանքային բամբակով	δ=30մմ	մ²	10
12	Ներածող օդատարի օդառիչի մասի մեկուսացում՝ ինքնատննվող մեկուսիչով	δ=10մմ	մ²	3
13	Օդառիչ ճաղաշար	օձ2600x200	հատ	1
14	Ճաղաշար շարժական	կձ2400x100	հատ	4
15	Ճաղաշար շարժական	կձ2300x150	հատ	1
16	Ճաղաշար շարժական	կձ2300x100	հատ	2
17	Ճաղաշար շարժական	կձ2250x100	հատ	2
18	Դիֆուզոր, կլոր, անշարժ	դիֆØ150	հատ	5
19	Փական, հետադարձ, կանալային օդամուղի համար	Ø315	հատ	1
20	Փական, հետադարձ, կանալային օդամուղի համար	Ø160	հատ	11
21	Ճկուն ներդիր օդամղիչի և կանալային ֆանկոյլի համար	-	մ	9
22	Համակարգի թողարկում, կարգաբերում	-	մ²	37
23	Մետաղական կոնստրուկցիա օդատարների միացումների և ամրացումների համար	-	կգ	8


Օդափոխության համակարգի սխեմա



2.6 Գազամատակարարում

Գազամատակարարման համակարգի միացումը կատարվելու է Բերդի բժշկական կենտրոնի գազատարից, որի համար նախաձեռնողը դիմել է Գազպրոմ Արմենիա ՓԲԸ-ին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Նախագծային փաստաթղթերում ներկայացված են գազատարի կառուցման, միացման և հաշվիչ հանգույցի կահավորման տեխնիկական մանրամասն նկարագրը:



Պայմանական նշաններ

— Նախագծվող ց/ճ վերգեռնույա գազատար

2.7 Հրդեհի ազդարարման համակարգ

Դիահերձարանի նոր մասնաշենքի համար նախատեսված է հրդեհի ազդարարման ավտոմատ համակարգ և համակցում 911 մոնիթորինգային համակարգին համապատասխան տեխնիկական և ընդհանուր դրույթներով:

Սույն նախագծում բոլոր տեխնիկական միջոցառումները մշակված են ՀՀ տարածքում գործող բնապահպանական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և այլ նորմերին համապատասխան: Համակարգի նախագծվող միջոցները դեպի մթնոլորտ վնասակար նյութեր չեն արտանետում:

Նախագծի մշակման հիմքերն ու ելակետային տվյալները:

Նորմատիվատեխնիկական փասթաթղթերի ցուցակ:

- Հրաման 595, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարի հրամանը հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին:
- ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն
- ՀՀՇՆ II - 8.04.02 - 2005 Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա

Ավտոմատ հակահրդեհային ազդանշանային և իրազեկման համակարգ նախատեսված է հսկող տարածքներում հրդեհի հայտնաբերման, տեղում տազնապի ազդարարման և համապատասխան ծառայություններին իրազեկման համար:

Որպես կենտրոնական վահանակ նախատեսված է օգտագործել “Рyбeж-08” տիպի հասցեային վահանակը և “Рyбeж-БИ” ինդիկացիոն վահանակը: Սարքավորումն ապահովում է հասցեային ծխի ազդարարների, ջերմային ազդարարների, հրդեհի ձեռքի հասցեային ազդարարների շուրջորյա ծրագրային հսկողություն: Հրդեհի ազդանշանի դեպքում հնարավոր է անմիջապես պարզել միացված տվիչի հասցեն որն արտացոլվում է սարքի էկրանի վրա: Ամբողջ տեղեկատվությունը /տազնապներ, հոսանքազրկումներ և այլն/ գրանցվում է սարքի հիշողությունում և դուրս է բերվում սարքի հեղուկաբյուրեղյա էկրանի վրա:

2.8 Ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են վերին Յուրայի հասակի նստվածքներ, որոնց արտաքին շերտը ծածկված է դելյուվիալ և պրոլյուվիալ ծագման նստվածքներով, որոնք ներկայացված են կավային գրունտներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքում ջրերը կապվում են գետահուններում թեք լանջերից դուրս եկող աղբյուրների ձևով: Գրունտային ջրերի հոսքեր, հիմնականում հանդիպում են ձորակների և գետի հովտում (ցածրադիր տարածքներում): Գրունտային ջրերը բեռնաթափվում է Տավուշ գետը: Ըստ ֆոնդային տվյալների մինչև 10մ խորությամբ ստորգետնյա ջրեր չեն բացահայտվել:

Ֆիզիկա-երկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.3g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

Տարածքի ինժեներա-երկրաբանական կառուցվածքը

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է հորատման միջոցով, ակնադիտական եղանակով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է երկու շերտեր: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ-1

Հողաբուսական շերտ ավազակավի լցոնով: Շերտի հզորությունը 0.0-0.20մ է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ IV-5- 82-ի (9^ա) I կարգ է:

Շերտ-2

Ավազակավեր բացից մինչ մուգ շագանակագույն, տեղ-տեղ մոխրագույն և դարչնագույն, երանգի պինդ թանձրությամբ, թույլ խոնավ, թեթև, ավազային, խճի մանրախճի պարունակությամբ 15-20: Դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Շերտի հզորությունը 0.20-5.0մ է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ IV-5- 82-ի (33^ա) III կարգ է:

Գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունների ընդհանրացված ցուցանիշներ

Հատկանիշի անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը
		2
Գրունտների անվանումները		Ավազակավ
Խտությունը տ/մ ³	ρ	1,80
Տեսակարար խտությունը տ/մ ³	ρ	1.95
Տեսակարար շաղկապվածությունը, ԿՊա	C	1,40
Նորմատիվային տեսակարար շաղկապվածությունը, ԿՊա	Cn	1,24
Ծակոտկենության գործակից	e	0.967
Ներքին շփման անկյուն, աստ.	φ	17° 20'
Ներքին շփման գործակից	tg φ	0,360
Ձևախախտման մոդուլը, ՄՊա	E	17.5
Բնական խոնավություն %	W	16,20
Գրունտի հաշվարկային դիմադրությունը կգ/սմ ²	R ₀	2,0
Ներքնակի գործակից տ/մ ³	k _h	2500
Գրունտի կարգը և մշակման պարագրաֆները ըստ ՄՆԻՊ - IV-5-82	աղ. 1	III (33 ⁹)
Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշերի ՀՀ ՇՆ 20.04.2020		III

Նախատեսվող գործունեության վերաբերյալ ինժեներատեխնիկական և հիդրոտեխնիկական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար /Հավելված 4/:

2.9 Շինարարական մեքենաներ և մեխանիզմներ

Նախատեսվող գործունեության շինարարական փուլում, աշխատանքների իրականացման համար պլանավորվել է հիմնական շին տեխնիկայի պահանջարկը:

Այն ներառում է հետևյալ միջոցները

№	Անվանում	Մակնիշ	Քանակ	Ծանոթություն
1.	Ավտոկոռունկ	KC-35715	1	Կամ համարժեք
2.	Բետոնամղիչ ավտոմոբիլ	СБ 126	1	Ըստ պահանջի

3.	Ինքնաթափ	MA3 5550	1	Կամ համարժեք
4.	Էքսկավատոր	Hyundai 170W	1	Կամ համարժեք
5.	Էլ.եռակցման սարք	CTH 500	1	Կամ համարժեք
6.	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1	Ըստ պահանջի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում և սպասարկման կետերում: Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

2.10 Շինարարական աշխատանքների ժամկետները

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ


N.	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ												
		30 օր	30 օր	30 օր	30 օր	30 օր	30 օր	30 օր	30 օր	30 օր	30 օր	30 օր	30 օր	30 օր
1.	ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ	■	■											
2.	ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ՄՈՆՏԱՃՈՒՄ		■	■										
3.	ՀԻՄՆԱՅԻՆ, ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ			■	■									
4.	ՍՅՈՒՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ				■	■								
5.	ՍՈՒՋԻՆ ՀԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ					■	■							
6.	ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ						■	■						
7.	ՏԱՆԻՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ							■	■	■				
8.	ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՊԱՏԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ								■	■	■			
9.	ԴՈՒՈ, ԼՈՒՍԱՍՈՒՏՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ									■	■	■		
10.	ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ										■	■	■	
11.	ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ												■	■

2.11 Շինարարական հրապարակ

Շինարարության իրականացման աշխատանքերը պետք է կազմակերպել այն հաշվով, որ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Բերդի բժշկական կենտրոնի հարևանությամբ:




Տարածքի նախնական կահավորումը ներառում է գրասենյակային տնակ, հանդերձարան, նյութերի պահեստ, բիո զուգարան, աղբի հավաքման համար տարրաներ, լուսատուներ՝ ամբողջ շինարարական տարածքի ընդգրկումով, հակահրդեհային վահանակ՝ առաջնային հրդեհամարման միջոցներով: Շին հրապարակի կազմակերպման պլանը իր տեղակայումներով ներկայացված է;

Շինարարական հրապարակի կազմակերպման պլան նախագիծ



2.12 Տարածքի բարեկարգում և կանաչապատում

Շինարարական հիմնական աշխատանքների ավարտին նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Նախագծային փաստաթղթերով կազմվել է բարեկարգման և կանաչապատման աշխատանքների ծավալը: Ծառատեսակները և կանաչապատման ծավալները ներկայցված են աղյուսակում:

N ը/կ	ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ	ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ	ՔԱՆԱԿ ՀԱՏ	ՏՆԿՄԱՆ ՍԽԵՄԱ
1		Ձիակասկ	4	
2		Դեկորատիվ սալոր	4	
3		Սերկեվիլ ճապոնական	9	
4		Թույա	4	
5		Սամշիտ-բնական պատմեշ	1զծմ - 4 հատ 21զծմ*4 - 84 հատ	
6		Ծաղկասածիլ	1քմ-30հատ	

Կանաչապատման և բարեկարգման պլանը գլխավոր հատակագծի մակերեսով ներկայացված է հավելված 5-ում:

Նախագծով նախատեսվող կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ առաջնորդվելով Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:

2.13 Բժշկական թափոնների կառավարում

Դատաբժշկական փորձաքննությունը ՀՀ տարածքում հանդիսանում է բուժօգնության և ծառայությունների տեսակ: Ուստի այս բժշկական ծառայության իրականացման արդյունքում առաջացած բժշկական թափոնները ենթակա են կառավարման համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների:

Բժշկական թափոնները ենթակա են անձնագրավորման, համաձայն թափոնների անձնագրավորման գործող օրենսդրական պահանջների: Շահագործման փուլում անհրաժեշտ է հաշվի առնել վտանգավոր բժշկական թափոնատեսակների առաջացումը, որոնք ենթակա են անձնագրավորման՝ «Թափոնների անձնագրավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N47-ն որոշման համաձայն: Անձնագրերը կազմում են թափոն առաջացնողները՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2007 թվականի փետրվարի 2-ի N19-Ն հրամանով հաստատված օրինակելի ձևին համապատասխան:

Գործունեության արդյունքում առաջացող թափոնների ցանկը ներկայացվում է աղյուսակային տեսքով:

	Վտանգավոր թափոնի անվանումը	Ծածկագիրը	Թափոնի վնասազերծման կամ վերամշակման պահանջներ
1.	Բժշկական թափոններ, որոնք առաջանում են առողջապահական ծառայությունների արդյունքում (ախտորոշում, կանխարգելում, բուժում, ծննդաբերություն)	970106000105 4	Իրականացվում է համաձայն հավելված 2 «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները եվ նորմեր»-ի պահանջների՝ լիցենզավորված ընկերության ուժերով, ծառայությունների մատուցման պայմանագրային հիմքով
2.	Փողակներ, սուր առարկաներ (նշտար, հերձադանակ)	970105000199 4	
3.	Այլ թափոններ, որոնց հավաքումն ու ոչնչացումը իրականացվում է հատուկ պահանջներին համապատասխան՝ վարակների առաջացումը կանխելու նպատակով	970109000105 4	
4.	Այլ թափոններ, որոնց հավաքումն ու ոչնչացումը պայմանավորված չէ հատուկ պահանջներով՝ վարակների առաջացումը կանխելու նպատակով	970119000100 4	
5.	Վարակազերծման անտիսեպտիկ նյութեր՝ փչացած, բանեցված	970302000101 3	

Թափոնների պահման համար պահանջվող պայմանները

Սրածայր թափոնների տարողություններ. Սրածայր թափոնների հեռացման համար օգտագործվող առաջնային տարողությունը պետք է լինի՝ կարծր, արտահոսքի նկատմամբ դիմացկուն, չկոտրվող և չծակվող: Սրածայրերի տարողությունը ապահովում է հետևյալ պահանջները՝ փակվելու հնարավորություն ունեցող բացվածք և լցման

առավելագույն չափի նիշ բեռնարկղի տարողության մոտավորապես 3/4 մասի մակարդակով: Բացվածքը նախատեսվում է այնպես, որ աշխատողի համար հեշտ լինի այնտեղ զետեղել օգտագործված ներարկիչները, ունենան գունային կոդավորում /կարմիր/ և կենսաբանական վտանգի նշան <<Զգույշ սրածայրեր>>: Նշվում է բաժնի անվանումը, թափոնի հավաքելու սկիզբը, ամիս ամսաթիվ, 3/4 լցվելուն պես փակվում է, նշվում է փակման ամիս, ամսաթիվը, ժամը, պատասխանատու աշխատողի անուն, ազգանուն ստորագրություն և տեղափոխվում վերջնական պահեստավորման սենյակ:

Բժշկական թափոնների, բացառությամբ սրածայրերի և հեղուկների համար նախատեսված տարողություններ և բեռնարկղեր - սովորաբար տեղադրվում

են պոլիէթիլենային պարկերի, պոլիէթիլենային պարկեր պարունակող սովորաթղթե տուփերի, կամ արտահոսքի նկատմամբ դիմացկուն այլ բեռնարկղերի մեջ:

Պոլիէթիլենային պարկերը լինում են անթափանցելի արտահոսքի նկատմամբ, ամուր կողքերով և հատակով և լինեն բավականին դիմացկուն, որպեսզի չպայթեն, չպատռվեն նախատեսված քանակի թափոններ պարունակելու դեպքում: Պոլիէթիլենային պարկը տեղավորվում է գունային կոդավորում ունեցող կարծր բեռնարկղի մեջ, որտեղ հավաքվում են բժշկական թափոնները: Բազմակի օգտագործման տարողությունները ախտահանվում են կրկնակի օգտագործումից առաջ: **Վարակիչ ոչ սրածայր**

թափոնների տարողությունների վրա պետք է փակցնել միջազգային կենսաբանական վտանգի նշանը և <<Վարակիչ թափոն>> բառերը: Նշվում է բաժանմունքի անվանումը, թափոնի հավաքելու սկիզբը, ամսաթիվը, տարողության մեջ տեղադրվում է պոլիէթիլենային տոպրակ, 3/4 լցվելուն պես /բայց ոչ ուշ 24 ժամ/ տոպրակը փակվում է, նշվում է փակման ամիս, ամսաթիվ, ժամը, պատասխանատու անձի անուն, ազգանուն, ստորագրություն: Տեղափոխում է վերջնական պահեստավորման սենյակ:

Թափոնների հավաքում և փոխադրում

- Բժշկական թափոններով տարողությունները լցնել մինչև իրենց ծավալի միայն երեք քառորդը, որպեսզի այն չթափվի և պատշաճ փակվի: Յուրաքանչյուր աշխատանքային հերթափոխի ընթացքում յուրաքանչյուր տարողություն հեռացնել առնվազն մեկ անգամ:

- Թափոնները հավաքել ամեն օր:
- Բժշկական թափոնները ըստ ժամանակացույցի բաժանմունքների ժամանակավոր պահման վայրերից փոխադրել կենտրոնական պահման տարածք՝ բեռնարկղների օգնությամբ, որտեղ այն կպահեստավորվի:
- Փոխադրող սայլակները /եթե առկա են/ պետք է ունենան գունային կոդավորում և օգտագործվեն միայն այդ նպատակի համար:
- Բազմանվագ օգտագործման տարողությունները դատարկվելուն պես վարակազերծվում և լվացվում են:
- Ախտաբանաանատոմիական թափոնները հավաքվում են հատուկ հոծ տարողության մեջ, պահվում են սառնարանում, բայց ոչ ավել 24 ժամ:
Տարողությունը դատարկվելուն պես այն վարակազերծվում ու լվացվում է:
- Բոլոր տեսակի բժշկական թափոնները տարողությունների մեջ տեղադրվելուց հետո հերմետիկորեն փակվում են, իսկ ախտաբանաանատոմիական, միկրոկենսաբանական, սրածայր և քիմիական թափոնները նաև կնքվում, ինչից հետո բժշկական թափոնի հավաքելու, տեղադրելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողը լրացնում է պիտակ՝ դրա վրա նշելով տեղադրված բժշկական թափոնի տեսակը, տարողությունում տեղավորելու կոնկրետ ժամը, օրը, ամիսը, տարեթիվը, իր անունը և ազգանունը, ինչպես նաև կազմակերպության անվանումը:
- Լրացված պիտակը ամրացվում է տարողությանը, որն անմիջապես տեղափոխվում է բժշկական թափոնների ժամանակավոր պահման հատուկ տարածք: Լրացված պիտակը տարողությունից տարանջատվելու հնարավորությունը բացառվում է:
- Փակված տարողությունները կարող են բացվել միայն բժշկական թափոնների վնասազերծման նպատակով: Մնացած բոլոր դեպքերում փակված տարողությունները բացելն արգելվում է:
- Եթե փակված տարողությունը որևէ կերպ վնասվել է, ապա այն տեղադրվում է ավելի մեծ տարողության կամ բեռնարկղի մեջ և փակվում՝ չվնասելով սկզբնական կնիքը և նոր տարողությունը ևս պիտակավորվում է:

- Տարողությունների վնասվելու հետևանքով բժշկական թափոնների արտահոսքի դեպքում թափոնների հետ շփում ունեցած բոլոր մակերեսները ենթակա են ախտահանման:
- Բժշկական թափոնների գործածության մեջ ներգրավված աշխատողները պետք է ապահովված լինեն անձնական պաշտպանական հանդերձանքով՝ գերդիմացկուն ձեռնոցներ, երկար թևքերով արտահագուստ, կոշիկներ, դիմակ: Այս հանդերձանքը պետք է օգտագործվի միայն թափոնների հետ գործ ունենալիս:
- Վարել հատուկ մատյաններ՝ բժշկական թափոնի գոյացման տեղում և ժամանակավոր պահման հատուկ տարածքում: Բժշկական թափոնի գոյացման վայրում վարվող մատյանում նշվում է բժշկական թափոնի տեսակը, դրա հավաքման և գոյացման տեղից հեռացման ամսաթիվը: Բժշկական թափոնի ժամանակավոր պահման հատուկ տարածքում վարվող մատյանում նշվում է թափոնի տեսակը, քանակը, դրա ժամանակավոր պահման հատուկ տարածքում տեղադրման սկիզբը և ժամանակավոր պահման հատուկ տարածքից փոխադրելու ամսաթիվը:
- Կազմակերպությունը պետք է ունենա բժշկական թափոնների ժամանակավոր պահեստավորման սենյակ, որտեղ կողմնակի անձանց մուտքը խստիվ արգելված է և ոչ ավելի քան 1 օր պահելուց հետո տեղափոխել կենտրոնական պահեստարան:

Վերջնական պահեստավորման սենյակին ներկայացվող պահանջները

- Պաշտպանված լինի ջրից /այդ թվում ջրհեղեղներից/ մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ողղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն:
- Հատակը լինի ամուր, ջրաթափանց և ունենա ջրահեռացում:
- Պահեստային տարածքը մաքրման համար ապահովված լինի ջրով:
- Ապահովված լինի լուսավորությամբ և բնական օդափոխությամբ: Կողմնակի անձանց մուտքը խիստ արգելված է: Սենյակի մուտքին փակցվում են <<վարակիչ թափոններ>>, <<կողմնակի անձանց մուտքն արգելվում է >> պիտակները:

- Տարածքը տեղակայված լինի թափոնների հետ աշխատողի համար մատչելի տեղում:
- Թափոնների տարածքին մոտ պահվում է մաքրող և ախտահանող պարագաների, պաշտպանական հագուստի և պոլիէթիլենային պարկերի կամ կոնտեյներների պաշար՝ թափոնների արտահոսքի դեպքերի համար:
- Տեղակայված լինի սննդի պահեստից հեռու և տարածքը կենդանիների համար անհասանելի լինի:
- Թափոնները պահեստավորվում են այնպես, որ բացառվի պարկերի տարողությունների և բեռնարկղների վնասումը և բացումը:
- Թափոնները պահվում են ձմռանը 72 ժամից, ամռանը 48 ժամից ոչ ավել:
- Բժշկական բոլոր թափոնները վնասազերծվում են լիցենզավորված ընկերության կողմից Դատաբժշկական կենտրոնի հետ գործող պայմանագրի շրջանակներում:

3. Շրջակա միջավայրի նկարագիր

3.1 Ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական բնութագիր

Նախատեսվող գործունեության համար ազդակիր համայնք է հանդիսանում Բերդը համայնքը: Հմայնքի ունի 17 բնակավայրեր: ք. Բերդ, Այգեպեր, Ներքին Կարմիրաղբյուր, Տավուշ, Պառավաքար, Վարագավան, Վերին Ծաղկավան, Չինչին, Իծաքար, Նավուր, Վերին Կարմիրաղբյուր, Նորաշեն, Մովսես, Արծվաբերդ, Չորաթան, Այգեծոր, Չինարի: Բերդ բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է 2017 թվականի հունիսի 9-ին՝ ՀՀ Ազգային ժողովում՝ համայնքների խոշորացման օրինագծով:

Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրությունները կայացել են 2017 թվականի նոյեմբերի 5-ին:

Բերդ համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հյուսիս-արևելյան մասում: Համայնքը տեղակայված է Մուրղուզի լեռնաշղթայի Կենաց լեռնաճյուղի վրա՝ Տավուշ գետի հովտում, որը ձգվում է հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք: Համայնքը արևմտյան տարածքներով սահմանակից է Իջևանին, հարավ-արևմտյան տարածքներով Ճամբարակին, հյուսիսից և հյուսիս-արևելքից՝

Ադրբեջանին: Բերդ համայնքի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 78528,27 հա: Ռելեֆը բարդ է, գետի լանջերը թեք են, կտրված հեղեղատներով: Տարածքի միջին բացարձակ բարձրությունը ծովի մակարդակից 934մ: Երևանից հեռու է 202 կմ, մարզկենտրոնից՝ 63,8 կմ: Բերդ համայնքը սահմանամերձ է: Բերդ համայնքն ունի բարեխառն կլիմա, սակավաձյուն է, ոչ սառնամանիքային շրջանը հաշվվում է շուրջ 220 օր: Բերդն իր անունն ստացել է Տավուշ բերդի անունից և տեղակայված է եղել Տավուշ գետի ձախ ափին: 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու կողմից Բերդը հիշատակվում է Ոլորուտ անունով, 1608թ. մի հիշատակարանում՝ Բերդ անվամբ: Հնում այս տարածքը մտել է Մեծ Հայքի ՌԽտիք նահանգի մեջ: Բերդի տարածքում գտնվում են մի շարք պատմական հուշարձաններ, բազմաթիվ կիկլոպյան և միջնադարյան ամրոցներ, որոնց թիվը անցնում է 40-ից, և եկեղեցիներով ու մատուռներով, որոնց թիվը հասնում է 100-ի: Բերդ համայնքի տարածքի շրջակայքը հիմնականում ներկայացված է անտառային լանդշաֆտով: Համայնքը շրջապատող անտառային հողերի մակերեսը կազմում է շուրջ 58,307հազ. հա:

Համայնքի բնակչության թիվը¹ կազմում է 31479 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 15777 և կանայք՝ 15702, իսկ առկա բնակչության թիվը կազմում է 23264 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 11164 և կանայք՝ 12100:

Բնակչության տարիքային և սոցիալական կազմը

	Տարիքային կազմ	Սոցիալական կազմը		
		Ընդամենը	Իգական	Արական
1.	մինչև 1 տարեկան	345	152	193
2.	1-2 տարեկան	656	311	345
3.	3-4 տարեկան	621	293	328
4.	5-6 տարեկան	683	311	372
5.	7-10 տարեկան	1485	743	742
6.	11-14 տարեկան	1560	774	786

¹ Բերդ համայնքի 2023-2027 Չարգացման Ծրագիր

7.	15-17 տարեկան	1062	519	543
8.	18-22 տարեկան	1647	888	759
9.	23-45 տարեկան	11026	5121	5905
10.	46-62 տարեկան	7017	3359	3658
11.	63 և ավելի տարեկան	5377	3231	2146

3.2 Կլիմա

Հայցվող տարածքի համար պահանջվող շինարարական կլիմայաբանության մասին տեղեկատվությունը ներկայացվում է համաձայն 2024 թվականի հունվարի 15-ի ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի N 03-Ն հրամանի «ՀՀՀՆ 22-01-2024» «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմեր»-ից, որը ներառում է տվյալներ, հիմնավորումներ և հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրականացման համար:

Կլիմայական ցուցանիշները հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որոնք ունեն օդերևութաբանական դիտարկումների բավականին երկար շարք (25-30 տարուց ոչ պակաս):

Հաշվետվության համար այդպիսի բնակավայր է համարվում Բերդ համայնքը, որի համապատասխան կլիմայական հարաչափերը ներկայացված են աղյուսակային ձևաչափով:

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈՒՆ ՍԿԻՋԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը		Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Բերդ		0.5	0.9	4.5	10.5	15.6	19.1	22.3	21.4	17.4	11.6	6.8	2.7	11.1	-17	38

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
1. Բերդ	71	72	75	74	76	71	67	69	73	77	75	73	73	71	67	67	54

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

12. Բերդ	21	27	41	51	71	67	42	30	35	42	28	17	472	134	338
	15	20	29	30	45	63	48	46	85	36	27	16	85		

ՁՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Աղյուսակ 14 Ձյան ծածկույթ (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
1. Բերդ	34	50	56	-

ՔԱՄԻ

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Միջին արագությունը, մ/վ	Միջին արագությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ														
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16					
Բերդ	հունվա ր	1	10	14	2	8	44	19	2	23	1.7	Այլ	2.2	ՀվԱրմ	2.7					
		2.4	2.6	2.2	1.6	2.0	2.7	2.6	2.2											
	ապրիլ	2	19	18	3	8	35	12	3	15	2.1									
		3.2	2.7	2.5	1.8	1.8	2.6	2.3	3.2											
	հուլիս	2	18	18	3	8	36	11	4	20	2									
		2.7	2.6	2.2	1.7	1.8	2.5	2.5	2.1											
	հոկտե մբեր	1	16	17	2	6	40	15	3	28	1.8									
		2.6	2.5	2.3	1.7	2.2	2.6	2.4	2.6											

3.3 Աշխարհագրություն

Բերդ համայնքը գտնվում է Հայաստանի հյուսիսարևելյան հատվածում՝ Տավուշի մարզում: Այն հանդիսանում է տարածաշրջանի կարևոր վարչական և տնտեսական կենտրոններից մեկը: Բերդը տեղակայված է Տավուշի մարզի արևելքում՝ Տավուշ գետի կիրճում: Բնորոշ են մերձալպյան և լեռնային լանդշաֆտները: Այս ռելիեֆը նպաստում է ինչպես անտառային տնտեսության, այնպես էլ մեղվաբուծության և անասնապահության զարգացմանը: Համայնքը շրջապատված է լեռներով և անտառներով, ինչը նրան տալիս է յուրահատուկ բնական գեղագիտություն: Համայնքի հարավով ձգվում է Միափորի

ծալքավոր լեռնաշղթան, որի ամենաբարձր գագաթը Մուրղուզն է (2993 մ): Տարածքի միջին բացարձակ բարձրությունը ծովի մակարդակից 934 մետր է: Ամենացածր կետերն ընկած են ՀՀ պետական սահմանի վրա, գետահովիտներում: Հախումը տարածքի սահմանագիծը հատում է 530 մ, Խնձորուտը՝ 560 մ և Տավուշը՝ 645 մ բարձրության վրա:

Բերդ համայնքի տարածքով հոսում է Տավուշ գետը, որը իր վտակներով համայնքին ապահովում է ջրամատակարարում և ոռոգում: Գետերի առկայությունը նպաստում է նաև փոքր հիդրոէներգետիկ կայանների կառուցմանը: Համայնքի տարածքը պատկանում է Կասպից ծովի ավազանին: Դեպի հյուսիս և հյուսիս-արևելք հոսում են Քուր գետի աջակողմյան ոչ մեծ վտակները, որոնց սնումը ձնանձրևային է և հորդանում են ապրիլ, մայիս և հունիս ամիսներին: Դրանք են Հախումը, Տավուշը, Խնձորուտը, Ախնջան: Դեռևս խորհրդային շրջանում գետերի վրա կառուցվել են արհեստական լճեր՝ Տավուշի ջրամբար, Խնձորուտի ջրամբար, Հախումի ջրամբար, Քոլագրի ջրամբար:

Համայնքը հարուստ է անտառային ռեսուրսներով՝ լայն տարածում ունեն թխկի, կաղնու, բոխու և այլ տեսակների անտառներ: Հնարավոր է նաև օգտակար հանածոների (քար, ավազ, կավ) որոշ տեսակների արդյունահանում: Տարածքում բնակվում են Հայաստանի համար բնորոշ մի շարք կենդանատեսակներ՝ հովազ, աղվես, վարազ, ինչպես նաև մեծ թվով թռչնատեսակներ: Անտառները կարևոր են ինչպես կենսաբազմազանության պահպանման, այնպես էլ էկոտուրիզմի զարգացման տեսանկյունից:

Բերդում կլիման մեղմ է՝ զով ամառներով և ոչ շատ ցուրտ ձմեռներով: Միջին տարեկան ջերմաստիճանը մոտավորապես $+10^{\circ}\text{C}$ է, իսկ տարեկան տեղումների քանակը՝ շուրջ 600–700 մմ: Աշխարհագրական լայնությունը հնարավորություն է տալիս ստանալու ավելի մեծ քանակի արեգակնային ճառագայթում, կրում է Սև և Կասպից ծովերի մեղմացող ազդեցությունը, Կովկասյան լեռնաշղթան զգալիորեն թուլացնում է հյուսիսային ցուրտ օդային զանգվածների ազդեցությունը: Հանրապետության մայրաքաղաքից հեռու է 202 կմ, մարզկենտրոնից 63,8 կմ:

Բերդ համայնքը տեղակայված է Տավուշի մարզի լեռնային գոտում՝ միջին բարձրությունների վրա (մոտ 900–1100 մ): **Տարածքի հողերը** հիմնականում ներկայացված են լեռնային հողերով և կավահողերով, որոնք ունեն միջինից բարձր բերրիություն և կայուն կառուցվածք: Հողի կազմավորումը պայմանավորված է տեղանքի ռելիեֆով, կլիմայական գործոններով և վեգետացիայով:

Տարածքում էապես զարգացած են ալյուվիալ հողերը՝ Տավուշ գետի հովտի երկայնքով, ինչպես նաև շագանակագույն և հումուս-կարբոնատային հողեր՝ լանջային հատվածներում: Նշված հողերը ունեն բավարար ջրաթափանցելիություն և առկա են հողմային էրոզիայի ռիսկեր, հատկապես լանջային մասերում:

3.4 Հողային ֆոնդ և գյուղատնտեսություն

Բերդ համայնքի հողային ռեսուրսները բազմազան են և կարևոր դեր ունեն ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ անտառային և բնապահպանական գործունեության համար:

Վարելահողերը տարածված են հիմնականում գետահովիտներում և բլրոտ հարթավայրերում, մինչդեռ լեռնային և անտառային գոտիներն ավելի պիտանի են արոտավայրերի ու մեղվաբուծության համար:

Հողային ֆոնդի հիմնական տեսակները՝

Հողատեսակ	Բաժինը հողային ֆոնդում (%)	Նկարագրություն
Գյուղատնտեսական նշանակության հողեր	~40–45%	Ներառում է վարելահողեր, այգիներ, խոտհարքներ, արոտավայրեր:
Անտառային հողեր	~30–35%	Տավուշի լեռնային շրջաններին բնորոշ խիտ անտառներով:
Բնակավայրերի հողեր	~10%	Բերդ քաղաքը և գյուղական բնակավայրերը:

Հողատեսակ	Բաժինը հողային ֆոնդում (%)	Նկարագրություն
Պահուստային և արդյունաբերական հողեր	~10–15%	Պահուստային հողեր, ճանապարհներ, ջրամբարներ և այլ ենթակառուցվածքներ:

Գյուղատնտեսությունը հանդիսանում է Բերդ համայնքի բնակչության հիմնական զբաղմունքը՝ հատկապես գյուղաբնակ հատվածներում: Այն ներառում է ինչպես բուսաբուծություն, այնպես էլ անասնապահություն և մեղվաբուծություն:

Բուսաբուծություն, մշակվող մշակաբույսեր՝

- **Մրգեր՝** խնձոր, սալոր, տանձ, ծիրան
- **Պտղաբուծություն՝** հատապտուղներ (մորի, ազնվամորի, հաղարջ)
- **Բանջարեղեն՝** լոլիկ, վարունգ, կարտոֆիլ
- **Ցորեն և կերային բույսեր՝** սահմանափակ քանակով

Բերդի կլիման հատկապես բարենպաստ է պտղաբուծության զարգացման համար: Վերջին տարիներին աճել է նաև ինտենսիվ այգիների հիմնումը:

Անասնապահություն, Զարգացած են՝

- Տավարաբուծություն (կաթնային և մսային)
- Խոզաբուծություն
- Թռչնաբուծություն

Արոտավայրերի առկայությունը նպաստում է մթերող անասնապահության զարգացմանը:

Մեղվաբուծություն՝

Տավուշի բուսական բազմազանությունը և մաքուր բնությունը նպաստում են որակյալ մեղրի արտադրությանը: Մեղվաբուծությունը համայնքի համար դիտվում է որպես աճող և արտահանելի ենթաոլորտ:

Գյուղատնտեսության ոլորտի բնորոշ խնդիրներ

- Զրարբիացման համակարգերի մաշվածություն
- Սահմանափակ տրանսպորտային ու տեխնիկական միջոցներ
- Շուկայի հասանելիության/տեղափոմձան դժվարություններ (հատկապես մրգերի համար)

- Կլիմայական անակնկալներ՝ զարնանային ցրտահարություններ կամ ամառային երաշտ

3.5 Բնության, Պատմության և Մշակույթի անշարժ հուշարձաններ

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «ը» կետով, ՀՀ կառավարությունը, 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ սահմանվել են ՀՀ **Բնության հուշարձանների** ցանկը:

ՀՀ Բնապահպանության նախարարի թիվ 220 որոշմամբ հաստատվել են ՀՀ Տավուշի մարզի 15 բնության հուշարձանների անձնագրերը:

Բերդ քաղաքի շուրջ գտնվում են 2 օբյեկտներ՝

1) Պլագիոգրանիտ-պորֆիրային դայք

- **Տեսակ:** Երկրաբանական հուշարձան
- **Տեղադրություն:** Բերդ քաղաքից մոտ 6.5 կմ հարավ-արևմուտք, Տավուշ գետի ձախ ափին, գետից մոտ 5 մ բարձրության վրա
- **Նկարագրություն:** Այս հուշարձանը ներկայացնում է պլագիոգրանիտ-պորֆիրային կազմով դայք՝ յուրահատուկ երկրաբանական ձևավորում, որը կարևոր է տարածաշրջանի երկրաբանական պատմության ուսումնասիրության համար

2) Կովասարի փոխակերպարային թերթաքարեր

- **Տեսակ:** Երկրաբանական հուշարձան
- **Տեղադրություն:** Բերդ քաղաքից մոտ 20 կմ հարավ՝ Վարագաջուր (Հախում) գետի վերին հոսանքի ավազանում, Վարագաջուրի ձախ վտակ Կառնուտի և Վարագաջուր գետի աջ չոր վտակի հատման կետում, Կառնուտ վտակի հոսանքն ի վեր գնացող գրունտային ավտոճանապարհի աջ կողմում
- **Նկարագրություն:** Այս հուշարձանը իրենից ներկայացնում է բնական երկրաբանական մերկացում, որը կազմված է բաց և բաց մոխրագույն մուսկովիտ-կվարցային կազմի բյուրեղային թերթաքարերով:

Բերդ համայնքը և դրա շուրջ գտնվող բնակավայրերը հարուստ են

պատմամշակութային հուշարձաններով՝ մատենագրական, ճարտարապետական և

ռազմական ժառանգության տեսանկյունից: «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2004թ-ի դեկտեմբերի 30 թիվ 1929 որոշմամբ սահմանել է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը:

Բերդ քաղաքի համար ներկայացված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը ներկայացված է ստորև:

10.2 ԲԵՐԴ քաղաք							
1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ «ԲԵՐԴ»	Ք.ա.1 հազ.	քաղաքի հվ-աե եզրին, զբոսայգու տարածքում	Հ	1: Ենթակայությանը ներկայացված է ևս 1 հուշարձան (1.2)
	1.1		Դամբարանադաշտ	Ք.ա. 1 հազ. (Ք.ա. 5-4 դդ.)	ամրոցի մոտ	Հ	1.1
2			ԱՄՐՈՑ ՏԱՎՈՒՇ	10-14 դդ.	քաղաքի հվ-աե եզրին, Տավուշ գետի աջ ափին	Հ	ամրոց Թովուզ-դալա (2)
3			ԳԵՐԵՉՄԱՆՈՑ	10-19 դդ.	քաղաքի մեջ, Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշարձանի մոտ	Տ	4: Ենթակայությանը ներկայացված է 3 հուշարձան (4.1-4.3)
4			ԳԵՐԵՉՄԱՆՈՑ	13-20 դդ.	քաղաքի հս-աե մասում, ճանապարհի ծախ կողմում	Տ	5: Ենթակայությանը ներկայացված է ևս 1 հուշարձան (5.1)
	4.1		Մատուռ	13 դ.		Տ	5.2
5			ԳԵՐԵՉՄԱՆՈՑ	19-20 դդ.	քաղաքից 2 կմ աե, ճանապարհի եզրին, Տավուշը Ռուսաստանին միացնելու 175-ամյակի հուշարձանի մոտ	Տ	6
6			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՀԻՆ ԲԵՐԴ»	9-16 դդ.	քաղաքից 1.5 կմ հվ-աե, գետի աջ ափին	Հ	7: Ենթակայությանը ներկայացված է ևս 1 հուշարձան (7.2)

	6.1		Գերեզմանոց	9-16 դդ.		Հ	7.1: Ենթակայությանը ներկայացված է 2 հուշարձան (7.1.1-7.1.2)
7			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ ՏԱՎՈՒՇ	9-15 դդ.	քաղաքից հվ-աե, Տավուշ ամրոցի ստորոտին և ամրոցից հվ, գետի երկու կողմում	Հ	8
	7.1		Գերեզմանոց	9-13 դդ.	գյուղատեղիի հվ-ամ եզրին, Տավուշ գետի ձախ ափին	Հ	8.1: Դամբարանադաշտի տարածքում է: Ենթակայությանը ներկայացված է 2 հուշարձան (8.1.1-8.1.2)
	7.2		Գերեզմանոց	10-13 դդ.	նախորդ գերեզմանոցից մոտ 200 մ հս, բլրալանջին	Հ	8.2: Ենթակայությանը ներկայացված է 1 հուշարձան (8.2.1)
	7.3		Եկեղեցի Սբ. Աստվածածին	10-13 դդ.	ամրոցի ստորոտին, ռելիեֆ գործարանի դիմաց	Հ	8.3: Ենթակայությանը ներկայացված է 1 հուշարձան (8.3.1)
	7.4		Մատուռ	13 դ.	գյուղատեղիի հվ եզրին	Հ	8.4
8			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2 հազ.	քաղաքից 1.5 կմ հվ-աե, գետի աջ ափին, Հին Բերդ գյուղատեղիի գերեզմանոցի տարածքում	Հ	9
9			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2 - 1 հազ.	քաղաքից հվ-աե, Տավուշ գյուղատեղիի գերեզմանոցում	Հ	10
10			ԵԿԵՂԵՑԻ	13 դ.	քաղաքի մեջ, Ս. Մելքունյանի տան մոտ	Հ	11: Ենթակայությանը ներկայացված է 2 հուշարձան (11.1-11.2)
11			ԵԿԵՂԵՑԻ	13 դ.	քաղաքի մեջ, Ս. Մելքունյանի տան մոտ, նախորդ եկեղեցուց հս	Հ	12
12			ԵԿԵՂԵՑԻ «ՄԱՅՐԻ ՎԱՆՔ» («ՄԱՐԻԱՄ ՄԱՅՐԻ ՎԱՆՔ», ՍԲ. ՆՇԱՆ)	1286 թ., վրկռ.՝ 17 դ.	քաղաքից 2 կմ ամ, Նավուր գյուղ տանող ճանապարհի ձախ կողմում	Հ	13
	12.1		Գերեզմանոց	13-17 դդ.	եկեղեցու շուրջը	Հ	13.1: Ենթակայությանը ներկայացված է 1 հուշարձան (13.2)

13		ԵԿԵՂԵՑԻ ՍՔ. ՍԱՐԳԻՍ	12-13 դդ., հիմնո- վին վր- կռ.՝ 1871 թ.	քաղաքի ամ եզրին, Նավուր գյուղ տանող ճանապարհի ձախ կողմում	Հ	14
	13.1	Գերեզմանոց «Սք. Սարգսի խաչ»	12-20 դդ.	Եկեղեցու շրջակայքում	Հ	14.1: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 12 հուշար- ձան (14.1.1- 14.1.12)
14		ԵԿԵՂԵՑԻ «ՔՈՒՅՐ ԽԱԹՈՒՆ»	12-13 դդ.	քաղաքի ամ մասում, Սք. Սարգսի խաչ գերեզմանոցից 200 մ հվ, բլրակի ստորոտին	Հ	15: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 2 հուշարձան (15.1-15.2)
15		ԽԱՉՔԱՐ	10 դ.	քաղաքի կենտրոնում, քաղաքապետարանի մոտ, տան բակում	Տ	16
16		ՀՈՒՇԱՂՔՅՈՒՐ	1980 թ.	քաղաքի մեջ	Հ	17
17		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՅՎԱԾՆԵՐԻՆ	1969 թ.	քաղաքի մեջ	Հ	18
18		ՀՈՒՇԱՐՁԱՆ ՏԱՎՈՒՇԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑ- ՆԵԼՈՒ 175 - ԱՄՅԱԿԻՆ	1977 թ.	քաղաքից 2 կմ աե, ճանապարհի եզրին	Հ	19

Ստորև ներկայացնում ենք Բերդ համայնքի առավել հայտնի
պատմամշակութային հուշարձանները:

Բերդ համայնքի պատմամշակութային որոշ հուշարձանների նկարագրություն

1. Բերդի ամրոց (Տավուշի բերդ)

- **Դարաշրջան:** 10–13-րդ դարեր
- **Տեղադրություն:** Բերդ քաղաքի մոտ, Տավուշ գետի ափին
- **Նկարագրություն:** Կառուցված է բարձր բլրի վրա՝ ռազմավարական նշանակության վայրում: Ամրոցը իր դարաշրջանում կարևոր ռազմական դեր է խաղացել և հիշատակվում է տարբեր միջնադարյան աղբյուրներում:

2. Նոր Վարագավանք

- **Դարաշրջան:** 11–13-րդ դարեր

- **Տեղադրություն:** Չինարի գյուղի մոտ
- **Նկարագրություն:** Միջնադարյան վանական համալիր, որը կապված է Վարագա սարի Վարագավանքի հետ: Ունի մի քանի եկեղեցի, գավիթ և բնակելի շինություններ:

3. Սուրբ Հովհաննես եկեղեցի

- **Դարաշրջան:** 17–18-րդ դարեր
- **Տեղադրություն:** Բերդ քաղաքի տարածքում
- **Նկարագրություն:** Տեղական քարով կառուցված, համեստ բայց ճարտարապետական արժեք ներկայացնող եկեղեցի:

4. Խաչքարերի հուշարձանամեքեր

- Տարածքի տարբեր հատվածներում պահպանվել են միջնադարյան խաչքարեր՝ հատկապես գյուղերում՝ Նավուր, Տավուշ, Այգեպար, Չինարի:
- Որոշ խաչքարեր զարդարված են բուսական և երկրաչափական զարդանախշերով՝ կրելով արվեստի բարձրարժեք նմուշներ:

5. Քարե դամբարաններ և հնագիտական տարածքներ

- Բերդի շրջակայքում հայտնաբերված են բրոնզի դարաշրջանի և ուրարտական ժամանակաշրջանի բնակավայրերի հետքեր:
- Դամբարաններ՝ հողի տակ թաղված մեծ քարե շինություններ, որտեղ գտնվել են զենքեր, աշխատանքային գործիքներ, զարդեր:

Այլ նշանավոր վայրեր

- **Բերդ քաղաքի հին թաղամասերը՝** պահպանել են ժողովրդական ճարտարապետության տարրեր՝ քարե պատերով տներ, նեղ բակեր և ավանդական ոճի դռներ:
- **Հին կամուրջներ՝** կառուցված Տավուշ գետի վրա, որոշները դեռևս գործունակ են:

Նախադրեսվող գործունեության տարածքում գրանցված բնության, պատմության և մշակույթային հուշարձաններ չկան:

3.6 Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին:

Աղտոտման հիմնական պատճառներ կարող են հանդիսանալ՝

- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը, օրինակ՝ քիմիական և հանքարդյունաբերության ոլորտում.
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլ:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ Արտանետումները կարող են վնաս հասցնել, ինչպես մարդու առողջությանը և շրջակա միջավայրին, այնպես էլ տնտեսությանը Մթնոլորտային օդի արտանետումների և օդի որակի միջև գոյություն ունի բարդ փոխկապակցվածություն, որը ներառում է արտանետման աղբյուրների բարձրությունները, քիմիական կազմի վերափոխումները, արևի ճառագայթների, եղանակային և տոպոգրաֆիկ ազդեցությունները:

ՀՀ-ում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվում են ՀՀ ՇՄ նախարարության Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի կողմից՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում:


Համաձայն գործող կարգավորումների, այն տարածքներում որտեղ չկան օդի որակի դիտարկումներ ուղղորդվում ժամանակավոր առաջարկություններից, որը ՀՀ տարածքում սահմանում է ըստ բնակչության քանակի: Բերդ համայնքի դեպքում ըստ այս ուղեցույցի 10-50 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն ներկայացված են աղյուսակում:

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
10-50	0.095	0.006	0.033	1.1

Հաշվի առնելով այն հանգամանքն, որ Բերդ համայնքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ չեն իրականացվում, հաշվետվությունում ներկայացվում է բաց ռեսուրսների կողմից ներկայացված արդյունքները:

Օդի որակի նորմեր

Բերդ քաղաքի օդի որակի ինդեքսը /AQI/



Բերդ քաղաքի համար տարեկան միջին ցուցանիշը ըստ այս ռեսուրսի 24 AQI² է:

Այս ցուցանիշով Բերդի օդի որակը՝ մաքուր է, ռիսկը՝ նվազագույն, սահմանափակումներ չկան:

Հիմնական աղտոտիչների տարեկան ցուցանիշները Բերդ քաղաքի համար

Աղտոտիչ նյութեր	AQI	Միկրո*գ/մ ³
PM _{2.5}	13	3
PM ₁₀	8	6
NO ₂	9	4
O ₃	24	65

² ԱՄՆ AirNow գործակալությունը մշակել է օդի որակի ինդեքսի (AQI) հաշվարկման մեթոդաբանություն

Որոշ հայտնի աղբյուրներ ունեն նաև տեղական պաշտամունքային

նշանակություն:

ՀՀ ՇՄ նախարարության Հիդրոոգերակութաբանության և մոնիթորինգի կենտրոնը իրականացնում է մակերևութային ջրերի քանակական և որակական մոնիթորինգ: Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի 93 դիտակետ, որոնցում կատարվում են ամենօրյա հիդրոլոգիական դիտարկումներ՝ օդի և ջրի ջերմաստիճանների, ջրի մակարդակի, սառցային երևույթների և ջրի ելքի չափումներ: Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է գետերի, ջրամբարների, Որոտան-Արփա, Արփա-Սևան ջրատարների և Սևանա լճի 151 դիտակետ:

Համաձայն «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանել է՝ մակերևութային ջրերի որակի նորմերը Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի Քուր գետի վտակների ջրի որակի նորմերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾԵԻ ԿՈՒՐ ԳԵՏԻ ՓՈՔՐ ԿՏԱՎՆԵՐԻ ԶՐԵՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԸ՝ ԸՍՏ ՖԻԶԻԿԱԹԵՄԻԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ (վերնագիրը մՅբ. 22.07.21 N 1211-Ն, փոփ., լրաց. 29.06.23 N 1056-Ն)

Որակի ցուցանիշներ	Մակերևութային ջրային մարմինների կարգավիճակ					Միավոր
	I	II	III	IV	V	
Լուծված թթվածին	>7	>6	>5	>4	<4	մգO ₂ /լ
Թթվածնի կենսաքիմիական 5-օրյա պահանջարկ	3	5	9	18	>18	մգO ₂ /լ
Թթվածնի քիմիական պահանջարկ (բիքրոմատային)	10	25	40	80	>80	մգO ₂ /լ
Թթվածնի քիմիական պահանջարկ (պերմանգանատային)	2.21	10	15	20	>20	մգO ₂ /լ
Նիտրատ իոն	1.62	2.5	5.6	11.3	>11.3	մգN/լ
Նիտրիտ իոն	0.012	0.06	0.12	0.3	>0.3	մգN/լ
Ամոնիում իոն	0.2	0.4	1.2	2.4	>2.4	մգN/լ
Ընդհանուր անօրգանական ազոտ	1.3	4	8	16	>16	մգN/լ
Ֆոսֆատ իոն	0.09	0.3	0.6	1.2	>1.2	մգ/լ
Ընդհանուր ֆոսֆոր	0.05	0.2	0.4	1.0	>1.0	մգ/լ
Ցինկ, ընդհանուր	4.3	100	200	500	>500	մկգ/լ
Պղինձ, ընդհանուր	3.0	23.0	50	100	>100	մկգ/լ
Քրոմ, ընդհանուր	1.3	11.3	100	250	>250	մկգ/լ
Արսեն, ընդհանուր	0.42	10.0	50	100	>100	մկգ/լ
Կադմիում, ընդհանուր	0.24	1.24	2.24	4.24	>4.24	մկգ/լ
Կապար, ընդհանուր	0.66	5	25	50	>50	մկգ/լ
Նիկել, ընդհանուր	1.1	11.1	50	100	>100	մկգ/լ
Մոլիբդեն, ընդհանուր	0.76	1.52	3.04	6.08	>6.08	մկգ/լ
Մանգան, ընդհանուր	32	50	128	256	>256	մկգ/լ

Վանադիում, ընդհանուր	2.9	5.8	11.6	23.2	>23.2	մկգ/լ
Կոբալտ, ընդհանուր	1.4	2.8	5.6	11.2	>11.2	մկգ/լ
Երկաթ, ընդհանուր	0.09	0.2	1.0	2.0	>2.0	մգ/լ
Բարիում	0.03	0.1	0.5	1.0	>1.0	մգ/լ
Բերիլիում	0.015	0.03	0.06	100	>100	մկգ/լ
Լիթիում	0.5	1.0	2.0	4.0	>4.0	մկգ/լ
Բոր	0.015	0.45	0.7	1.0	>1.0	մգ/լ
Ալյումին	0.25	0.2	1.0	5.0	>5.0	մգ/լ
Սելեն, ընդհանուր	1.0	20	40	80	>80	մկգ/լ
Ծարիր, ընդհանուր	0.22	0.44	0.88	1.76	>1.76	մկգ/լ
Անագ, ընդհանուր	0.11	0.22	0.44	0.88	>0.88	մկգ/լ
Նատրիում	9.0	40	80	150	>150	մգ/լ
Կալիում	1.4	20	40	80	>80	մգ/լ
Կալցիում	40	75	150	300	>300	մգ/լ
Մագնեզիում	7.2	50	100	200	>200	մգ/լ
Քլորիդ իոն	6.3	12.6	150	200	> 200	մգ/լ
Սուլֆատ իոն	35	70	150	250	> 250	մգ/լ
Սիլիկատ իոն	7.7	15	30	60	>60	մգ Si/լ
Ընդհանուր լուծված աղեր	142	284	1000	1500	>1500	մգ/լ
Տեսակարար էլեկտրահաղորդականութ	218	436	1500	2300	>2300	մկՍմ/սմ
Կոշտություն	2.8	10	20	40	>40	մգԷկվ/լ
Կախության չոր կյուրեր	2.84	30	60	120	>120	մգ/լ
Հոտ (20°C and 60°C)	<2 (բնական)	2 (բնական)	2	4	>4	բալ
Գույն	բնական	<5 (բնական)	20	30	>200	աստիճան

Համաձայն Հիդրոմետ ՊՈԱԿ-ի ՀՀ տարածքում մակերևութային ջրերի որակի 2024թ ամփոփագրերի, ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 35%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 23%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 31%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):



Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը «լավ»-ից «անբավարար» որակի է (2-4-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝

պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով:

3.9 Բուսական և կենդանական աշխարհ

Բերդ համայնքը գտնվում է Տավուշի մարզի լեռնանտառային գոտում, որն ունի հարուստ կենսաբազմազանություն: Տարածքի բարձրությունները, խոնավ կլիման և հարուստ հողաբանական կառուցվածքը նպաստել են բազմատեսակ բուսական և կենդանական աշխարհի ձևավորմանը: Տարածքն ընդգրկված է բնության հատուկ պահպանվող տարածքի մեջ, սակայն հանդիսանում է կենսաբանական ակտիվության բարձր գոտի:

ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Տարածքում տարածված են հետևյալ բնորոշ բուսատեսակները՝

- Ծառեր՝ կաղնի, սոսնի, եղեգնի, թեղի, թխկի, վայրի տանձենի, հացենի
- Թփեր և մացառներ՝ կարմրախոշոր, կուռկուռ, սևհոնի, վայրի վարդ
- Խոտաբույսեր՝ ուրց, կատվախոտ, պուտավոր երիցուկ, թարխուն, վայրի սամիթ

Բուսական ծածկույթը նպաստում է հողի պաշտպանությանը էրոզիայից և ծառայում է որպես կենսական միջավայր կենդանիների համար:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Տարածքի ֆաունան ներկայացված է բազմաթիվ տեսակներով, այդ թվում՝

- Կաթնասուններ՝ աղվես, վարազ, նապաստակ, լուսան, գորշ արջ (հազվադեպ)
- Թռչուններ՝ սեռնաղավն, կկու, սևաչյա կաչաղակ, բազե, անգղ (դիտարկվել է ժամանակ առ ժամանակ)
- Սողուններ և երկկենցաղներ՝ կաչուն մողես, հայկական գյուրգա (հազվադեպ), կանաչ գորտ

Հատուկ ուշադրության են արժանի այն տեսակները, որոնք գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Այս տարածքում հնարավոր է հանդիպել՝

- Գորշ արջ (*Ursus arctos*) – ՀՀ Կարմիր գիրք
- Լուսան (*Lynx lynx*) – պահպանվող տեսակ

3.10 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանում ներկայումս գործում են 27 արգելավայրեր, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 114812.7 հա կամ հանրապետության տարածքի 3.95 %-ը:

Բնության հատուկ պահպանվող տարածքները պետության կողմից բնության տարբեր տարածքներում որևէ տնտեսական գործունեության սահմանափակումը կամ առհասարակ արգելումն է օրենսդրությամբ, որն ուղղված է կենսաբազմազանությունը և էկոհամակարգերը պահպանելուն:

Հայաստանի Հանրապետությունում ԲՀՊՏ դասակարգվում են 4 կատեգորիայի՝

- **պետական արգելոցներ,**
- **ազգային պարկեր,**
- **պետական արգելավայրեր,**
- **բնության հուշարձաններ:**

Բնության հատուկ պահպանվող տարածքների շնորհիվ ապահովվում են եզակի էկոհամակարգերի, հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող, էնդեմիկ, ռելիկտային տեսակների պահպանությունը և վերարտադրությունը բնական միջավայրում:

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.09.2014 թ. N- 1059-Ա որոշման ԲՀՊՏ-ների պահպանությունն իրականացնող ՊՈԱԿ-ների կազմում ընդգրկված են հետևյալ ԲՀՊՏ-ները:

ՊՈԱԿ	ԲՀՊՏ-ներ	Տարածքը, հա	ՀՀ մարզը
«Խոսրովի անտառ» պետական արգելոց	«Խոսրովի անտառ» պետական արգելոց	23213.5	Արարատ, Կոտայք
	«Խոր վիրապ» պետական արգելավայր	50.28	Արարատ
	«Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայր	95.9	Արարատ
«Զանգեզուր կենսոլորտային համալիր	«Շիկահող» պետական արգելոց	12137.1	Սյունիք
	«Արևիք» ազգային պարկ	31211.19	Սյունիք
	«Բողաքար» արգելավայր	2728	Սյունիք

	«Սոսու պուրակ» արգելավայր	64.2	Սյունիք
	«Զանգեզուր» արգելավայր	25711.6	Սյունիք
	«Խուստուփ» արգելավայր	6946.74	Սյունիք
	«Սև լիճ» արգելավայր	240	Սյունիք

«Դիլիջան» ազգային պարկ»	«Դիլիջան» ազգային պարկ	33 765	Տավուշ
	«Ախնաբադի կենու պուրակ» արգելավայր	25	Տավուշ
«Սևան» ազգային պարկ	«Սևան» ազգային պարկ	147455	Գեղարքունիք
	«Գիհու նոսրանտառային» արգելավայր	3312.0	Գեղարքունիք
Արգելոցապարկային համալիր	«Էրեբունի» պետական արգելոց	118.75	Կոտայք
	«Որդան կարմիր» արգելավայր	219.85	Արմավիր
	«Ջերմուկի ջրաբանական» արգելավայր	17371.76	Վայոց ձոր
	«Հանքավանի ջրաբանական» արգելավայր	5202.9	Կոտայք
	«Սոճուտ» դենդրոպարկը	35	Լոռի
	Իջևանի դենդրոպարկը	14,6	Տավուշ
	«Վանաձոր» դենդրոպարկը	1,9	Լոռի
	Բերդի «Սորաններ»	62	Տավուշ
	«Զրվեժ» անտառապարկը	423.8	Կոտայք

«Զիկատար» բնապահպանական կենտրոն»	«Զիկատար» արգելավայր	150	Տավուշ
«Արփի լիճ» ազգային պարկ»	«Արփի լիճ» ազգային պարկ	21039.3	Շիրակ

Նախատեսվող գործունեության շուրջ ԲՀՊՏ-ներ չկան:

3.11 Հազվագյուտ և անհետացող հատուկ պահպանվող տեսակներ

Բերդ համայնքի տարածքում հնարավոր **ՀՀ Կարմիր գրքում** գրանցված բուսական և կենդանական տեսակների ցուցակը՝ հիմնվելով Տավուշի մարզի լեռնանտառային գոտու բնութագրի վրա:

Բուսական աշխարհ

Տեսակ	Գիտական անվանում	Պաշտպանության կարգավիճակ
Սոսնովսկու վարդակակաշ	<i>Tulipa sosnowskyi</i>	Վտանգված
Կովկասյան սոճի	<i>Pinus kochiana</i>	Վտանգված
Կովկասյան կաղնի	<i>Quercus macranthera</i>	Վտանգված
Կովկասյան հացենի	<i>Carpinus caucasica</i>	Վտանգված
Կովկասյան թխկի	<i>Acer ibericum</i>	Վտանգված
Ձնծաղիկ Լագոդեխիի	<i>Galanthus lagodechianus</i>	Վտանգված

Կենդանական աշխարհ

Հայտնի անուն	Գիտական անվանում	Պաշտպանության կարգավիճակ
Կովկասյան գորշ արջ	<i>Ursus arctos</i>	Վտանգված
Կովկասյան լուսան	<i>Lynx lynx</i>	Վտանգված
Կովկասյան անգղ	<i>Gyps fulvus</i>	Վտանգված
Կովկասյան բազե	<i>Falco cherrug</i>	Վտանգված
Կովկասյան գյուրգա	<i>Vipera lebetina</i>	Վտանգված

4. ՆԳ-ի այլընտրանքային տարբերակների վերլուծություն

1. Ներկայիս առաջարկվող տարբերակը (հիմնական տարբերակ)

- **Նկարագրություն.** «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի երկհարկանի նոր դիահերձարանի կառուցում Բերդ համայնքում՝ դիահերձման բաժիններով և պահանջվող ենթակառուցվածքներով:
- **Առավելություններ.**

- Համայնքի տարածքում առողջապահական և դատաբժշկական ծառայությունների հասանելիության բարելավում
- Նոր աշխատատեղեր
- Սոցիալական և կառավարման համակարգերի արդիականացում
- **Թերություններ.**
- Շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ շինարարական փուլում
- Նոր ենթակառուցվածքների կառուցման անհրաժեշտություն

2. Գործունեության իրականացում այլ վայրում (երկրորդային տարբերակ)

- **Նկարագրություն.** Բնակչության համար դատաբժշկական ծառայությունների մատուցում այլ տարածքում՝ օրինակ՝ Տավուշի մարզկենտրոն Իջևանում մոտ 51 կմ լեռնային ճանապարհի որը կարելի է անցնել նորմալ կլիմայական պայմաններում 1.5 ժամում:
- **Առավելություններ.**
- Գործող ենթակառուցվածքներ առկայություն
- Շինարարական ծախսերի զրոյացում
- **Թերություններ.**
- Բերդ համայնքի բնակչությունը չի ունենա համայնքային դատաբժշկական ծառայություններ, հանդիսանալով նաև սահմանամերձ համայնք
- Հակասության կունենանք պետության տարածքային հավասար զարգացման քաղաքականությանը
- Բնակչության կողմից բողոքների դեպքերի ավելացում

3. Զրոյական տարբերակ (նախագծից հրաժարում)

- **Նկարագրություն.** Կենտրոնի չկառուցում և ծրագրից ամբողջական հրաժարում:
- **Առավելություններ.**
- ՇՄ-ի վրա շինաշխատանքների ազդեցություն չի արձանագրվում
- **Թերություններ.**
- Բերդ համայնքը զրկվում է արդի դատաբժշկական ծառայություններից
- Մնում են նախկին առողջապահական ենթակառուցվածքների բացերը, տես էջ 18-ում ներկայացված գործող մասնաշենքի ֆոտոպատկերը
- Սոցիալական և առողջապահական զարգացման նպատակների չիրականացում

- o Դատաբժշկական ծառայությունների ոչ լիարժեքություն

5. ՆԳ-ի ազդեցության աստիճանի որոշում

5.1 Ազդեցության ինտենսիվության և ժամանակի որոշում

Համաձայն ՇՄ նախարարաի 438 հրամանովի հավելված 2 ՇՄԱԳ Ուղեցույցի, ներկայացնում ենք նախատեսվող գործունեության ազդեցության ինտենսիվության և ժամանակի չափորոշիչների աստիճանավորումը ՇՄ բաղադրիչների համար:

Գնահատման ենթակա ազդեցություն շրջակա միջավայրի բաղադրիչներ	Ազդեցության ժամանակային գնահատման չափորոշիչներ		Ազդեցության ինտենսիվության գնահատման չափորոշիչներ	
	Աստիճանավորում	Չափորոշիչ	Աստիճանավորում	Չափորոշիչ
մթնոլորտային օդի որակական ցուցանիշներ, մթնոլորտն աղտոտող նյութեր	Միջնաժամկետ ազդեցություն	3 ամսից մինչև 1 տարի	Աննշան ազդեցություն	Բնական միջավայրի փոփոխությունները չեն գերազանցում բնական միջավայրի վերականգնողականության սահմանները
մակերևութային և ստորերկրյա ջրեր	Միջնաժամկետ ազդեցություն	3 ամսից մինչև 1 տարի	Աննշան ազդեցություն	Բնական միջավայրի փոփոխությունները չեն գերազանցում բնական միջավայրի վերականգնողականության սահմանները
հողային ռեսուրսներ	Միջնաժամկետ ազդեցություն	3 ամսից մինչև 1 տարի	Աննշան ազդեցություն	Բնական միջավայրի փոփոխությունները չեն գերազանցում բնական միջավայրի վերականգնողականության սահմանները

օգտակար հանածոներ, ընդերքօգտագործում,	Կիրառելի չէ			
բուսական ու կենդանական աշխարհ	Միջնաժամկետ ազդեցություն	3 ամսից մինչև 1 տարի	Թույլ ազդեցությ ուն	Բնական միջավայրի փոփոխությունները գերազանցում են բնական միջավայրի վերականգնողականութ յան սահմանները, սակայն բնական միջավայրը ինքնավերականգնվում է:
անտառներ	Կիրառելի չէ			
պատմության և մշակույթի հուշարձաններ	Կիրառելի չէ			
թափոններ	Կարճ ժամկետ ազդեցություն	Սահմանափակ ժամանակահատ ված, որի տևողությունը գումարային չի գերազանցում մեկ սեզոնը (մինչև 3 ամիս)	Թույլ ազդեցությ ուն	Բնական միջավայրի փոփոխությունները գերազանցում են բնական միջավայրի վերականգնողականութ յան սահմանները, սակայն բնական միջավայրը ինքնավերականգնվում է:
ֆիզիկական ազդեցություններ՝ աղմուկ, թրթռումներ	Միջնաժամկետ ազդեցություն	3 ամսից մինչև 1 տարի	Աննշան ազդեցությ ուն	Բնական միջավայրի փոփոխությունները չեն գերազանցում բնական միջավայրի վերականգնողականութ յան սահմանները
կլիմայի փոփոխության վրա ազդեցություն	Միջնաժամկետ ազդեցություն	3 ամսից մինչև 1 տարի	Աննշան ազդեցությ ուն	Բնական միջավայրի փոփոխությունները չեն գերազանցում բնական միջավայրի վերականգնողականութ յան սահմանները

ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոններ	Միջնաժամկետ ազդեցություն	3 ամսից մինչև 1 տարի	Թույլ ազդեցություն	Բնական միջավայրի փոփոխությունները գերազանցում են բնական միջավայրի վերականգնողականության սահմանները, սակայն բնական միջավայրը ինքնավերականգնվում է:
սոցիալական գործոններ	Միջնաժամկետ ազդեցություն	3 ամսից մինչև 1 տարի	Թույլ ազդեցություն	Բնական միջավայրի փոփոխությունները գերազանցում են բնական միջավայրի վերականգնողականության սահմանները, սակայն բնական միջավայրը ինքնավերականգնվում է:
արտակարգ իրավիճակների, պատահարների	Միջնաժամկետ ազդեցություն	3 ամսից մինչև 1 տարի	Թույլ ազդեցություն	Բնական միջավայրի փոփոխությունները գերազանցում են բնական միջավայրի վերականգնողականության սահմանները, սակայն բնական միջավայրը ինքնավերականգնվում է:

Ըստ ՇՄ առանձին բաղադրիչների ազդեցության հիմնավորումները ներկայացվում են ստորև, տեքստային և քարտեզային նյութերի տեսքով:

Ազդեցությունների նշանակության գնահատման հարցաթերթիկ		Այո	Ոչ
1)	Արդյո՞ք կա վտանգ, որ բնապահպանական չափանիշները կխախտվեն.		V
2)	Արդյո՞ք շատ մարդիկ կամ հասարակական կազմակերպություններ կտուժեն.		V
3)	Արդյո՞ք այլ բաղադրիչներ կտուժեն.		V
4)	Արդյո՞ք կտուժեն արժեքավոր ռեսուրսները.		V
5)	Արդյո՞ք կտուժեն բնության հատուկ պահպանվող տարածքները.		V
6)	Արդյո՞ք ազդեցությունից խուսափելը, ազդեցությունը նվազեցնելը, վերականգնելը կամ փոխհատուցելը բարդ կլինի.		V
7)	Արդյո՞ք կփոխվեն էկոլոգիական պայմանները.		V
8)	Նոր առանձնահատկությունները համապատասխանո՞ւմ են առկա միջավայրին.	V	
9)	Արդյո՞ք ազդեցությունը տվյալ տարածքի համար էական կլինի.		V
10)	Արդյո՞ք ազդեցությունը մեծ տարածք կընդգրկի.		V
11)	Կա արդյո՞ք անդրսահմանային ազդեցության ռիսկ.		V
12)	Արդյո՞ք ազդեցությունը երկարատև կլինի.		V
13)	Ազդեցությունը մշտակա՞ն կլինի, թե՞ ժամանակավոր.	Ժամանակավոր	
14)	Ազդեցությունը շարունակակա՞ն կլինի, թե՞ ընդհատվող.	ընդհատվող	
15)	Եթե ընդհատվող կլինի, ապա ի՞նչ հաճախականություն կունենա.	1 փարի	
16)	Արդյո՞ք ազդեցությունն անդառնալի հետևանքներ կունենա:		V

5.2 Շահագրգիռ կողմերի հետ աշխատանքներ

ՇՄԱԳ գործընթացների կազմակերպման համար նախաձեռնողը՝ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի և ներգրաված «Ծառուրյան Քոնսալթինգ» ընկերության մասնագիտական թիմի կողմից իրականացվել է շահագրգիռ կողմերի հետ աշխատանքներ, վերլուծության արդյունքները ներկայացված են ստորև աղյուսակում:

Աշխատանքները իրենց բնույթով եղել են խորհրդակցությունների տեսքով՝ տեղեկատվության հավաքագրման համար, հանրային լսումների տեսքով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության ստացման նպատակով, հանդիպումներ՝ կարծիքների փոխանակում շահագրգիռ կողմերի հետ, քննարկումներ:

Արդյունքում Կազմակերպությունը ստացել է Բերդ համայնքից նախնական համաձայնություն նախատեսվող գործունեության համար:

Շահագրգիռ կողմերի հետ աշխատանքների արդյունքում բարձրացված հարցերը, մտահոգությունները և խնդիրները վերլուծվել և ներկայացվել են սույն գնահատման հաշվետվության մեջ:

Աղյուսակ Շահագրգիռ կողմերի վերլուծության

#	Շահագրգիռ կողմ	Շահեր և հետաքրքրություններ	Ազդեցություն	Կարևորություն	Ներգրավման ծնաչափ
1.	ՀՀ Առողջապահության նախարարություն	բարձր	մեծ	առաջնային	Խորհրդակցություններ, աշխատանքային քննարկումներ
2.	Տեղական ինքնակառավարմա ն մարմին	բարձր	մեծ	առաջնային	Հնրային լուսմների կազմակերպում
3.	Շահագրգիռ հանրության, ազդակիր համայնք	բարձր	մեծ	առաջնային	Հնրային լուսմների կազմակերպում
4.	ՀՀ ՇՄ նախարարություն	բարձր	մեծ	առաջնային	Նախագծի ՇՄԱԳ փորձաքնություն
5.	Տարածքային կառավարման մարմիններ, մարզպետարան	միջին	փոքր	երկրորդային	հանդիպումներ, քննարկումներ ըստ անհրաժեշտության

Նախատեսվող գործունեության ազդեցության արժեքը ըստ Ուղեցույցի դիտարկվում է փոքր-աննշան միջակայքում, որը բնորոշ է նմանատիպ աշխատանքների համար:

Ազդեցության նշանակության գնահատում

Ազդեցության մեծությունը	Շրջակա միջավայրի զգայունությունը		
	Բարձր	Միջին	Ցածր
Մեծ	Բարձր	Բարձր	Չափավոր

Չափավոր	<i>Բարձր</i>	<i>Չափավոր</i>	<i>Փոքր</i>
Փոքր	<i>Չափավոր</i>	<i>Փոքր</i>	<i>Աննշան</i>

Շրջակա միջավայրի զգայունության սանդղակի օրինակ

Բարձր	Բարձր զգայունություն, հաճախակիություն, ազգային մասշտաբ, փոխարինման սահմանափակ հնարավորություն: Շրջակա միջավայրը չունի հանդուրժողականություն առաջարկվող փոփոխության նկատմամբ
Միջին	Միջին նշանակություն և հաճախակիություն, ազգային մասշտաբ և փոխարինման սահմանափակ հնարավորություն: Շրջակա միջավայրը որոշակի հանդուրժողականություն ունի առաջարկվող փոփոխության նկատմամբ
Ցածր	Ցածր կամ միջին նշանակություն և հազվադեպություն, տեղական մասշտաբ: Շրջակա միջավայրը հանդուրժող է առաջարկվածի նկատմամբ

Ազդեցության մեծության սանդղակի օրինակ

Մեծ	Ռեսուրսի կամ դրա որակի կամ ամբողջականության կորուստ զգալի տարածքում, հիմնական բնութագրերի, հատկանիշների կամ տարրերի լուրջ փոփոխություն, ազդեցությունը՝ ավելի քան 2 տարի
Չափավոր	Ռեսուրսների կորուստ, բայց ոչ զգալի տարածքի ամբողջականության վրա բացասական ազդեցություն, հիմնական բնութագրերի, հատկանիշների կամ տարրերի մասնակի փոփոխություն (վնաս, կորուստ), ազդեցությունը՝ 6 ամսից մինչև 2 տարի
Փոքր	Հատկանիշների, որակի կամ տարրերի որոշակի փոփոխություն, հիմնական բնութագրերից կամ առանձնահատկություններից մեկի կամ մի քանիսի աննշան կորուստ կամ փոփոխություն

5.3 Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների ըստ երեք փուլերի՝ շինարարություն, շահագործում, փակման փուլերում

1. Շինարարական փուլ

№	Ազդեցության բնույթը	Նկարագրություն	Ազդեցության աստիճան	Մեղմման միջոցառումներ
1	Օդի աղտոտում	Շինտեխնիկայի արտանետումներ (CO, NOx, SO ₂ , ՊՄ), փոշիաշարժություն հողային աշխատանքների ժամանակ	Կարճաժամկետ, միջին	Շինհրապարակի խոնավեցում, տեխնիկայի պարբերական սպասարկում

2	Աղմուկ և թրթռանք	Շինտեխնիկայի և տրանսպորտի աշխատանքից առաջացող աղմուկ (մինչև 75 դԲ)	Ժամանակավոր, տեղային	Աշխատանքային ժամերի սահմանափակում, աղմուկամեկուսիչ միջոցներ
3	Հողային խանգարումներ	Հողային շերտի հեռացում և ժամանակավոր խախտում	Վերականգնելի, տեղային	Վերականգնել հողաշերտը, կանաչապատում ավարտից հետո
4	Ջրերի աղտոտման ռիսկ	Նավթամթերքների կամ շինանյութերի ներթափանցման վտանգ մակերևութային ջրեր	Ցածր	Նավթամթերքների պահեստավորում փակ տարաներում, շինարարական կայանի տեղային ջրահեռացում
5	Թափոնների առաջացում	Կառուցապատման, փաթեթավորման, բետոնական մնացորդների թափոններ	Միջին	Տեղում տեսակավորում, լիցենզավորված կառույցների փոխանցում
6	Բուսական շերտի վնասում	Շինհրապարակի պատրաստման ընթացքում կանաչապատ տարածքի մասնակի վնասում	Սահմանափակ	Տեղափոխել կամ փոխարինել վնասված բույսերը, կանաչապատում ավարտին
7	Սոցիալական ազդեցություն	Աշխատատեղերի ստեղծում, ժամանակավոր բեռնվածություն տրանսպորտային ուղիների վրա	Դրական / չեզոք	Շինարարական երթուղիների կազմակերպում, տեղական աշխատուժի ներգրավում

II. Շահագործման փուլ

№	Ազդեցության բնույթը	Նկարագրություն	Ազդեցության աստիճան	Մեղմման միջոցառումներ
1	Օդի աղտոտում	Կաթսայատան և տրանսպորտի արտանետումներ	Ցածր	Կաթսաների պարբերական սպասարկում, վառելիքի որակի վերահսկում
2	Աղմուկի ազդեցություն	Դիահերձարանային տեխնիկայի, օդափոխիչների և տրանսպորտի աղմուկ	Ցածր, մշտական	Շենքային աղմուկամեկուսացում, սարքավորումների կարգաբերում

3	Ջրային աղտոտում	Կեղտաջրերի առաջացում լվացման և տեխնիկական գործընթացներից	Կառավարվող	Տեղային մաքրման կայանի շահագործում, պարբերական սպասարկում
4	Թափոնների առաջացում	Բժշկական վտանգավոր, կենցաղային և տեխնիկական թափոններ	Միջին	Հավաքում տարանջատմամբ, հանձնվում լիցենզավորված կազմակերպություններին
5	Հոտային ազդեցություն	Դիահերձման գործընթացների ժամանակ առաջացող հոտեր	Տեղային, կառավարվող	Օդափոխության և ֆիլտրման համակարգերի գործարկում
6	Էկոհամակարգերի վրա ազդեցություն	Չեզոք ազդեցություն՝ ներսային գործունեության բնույթի պատճառով	Չեզոք	Մշտադիտարկում, կանաչապատ տարածքների պահպանում
7	Սոցիալական ազդեցություն	Բնակչության սպասարկման որակի բարձրացում, աշխատատեղերի պահպանում	Դրական	Տեղական անձնակազմի մշտական ներգրավում

III. Փակման փուլ

№	Ազդեցության բնույթը	Նկարագրություն	Ազդեցության աստիճան	Մեղմման միջոցառումներ
1	Կառույցների ապամոնտաժում	Շինարարական և տեխնիկական կառույցների ապամոնտաժման ընթացքում առաջացող փոշի և աղմուկ	Ժամանակավոր	Աշխատանքների սահմանափակ ժամեր, տարածքի խոնավեցում
2	Թափոնների առաջացում	Բետոն, մետաղ, փայտ և պլաստմասսա	Միջին	Թափոնների տեսակավորում, մետաղի վերամշակում
3	Հողային խանգարում	Հողային մակերեսների ժամանակավոր խախտում ապամոնտաժման ժամանակ	Վերականգնելի	Տարածքի հարթեցում և կանաչապատում

4	Սոցիալական ազդեցություն	Ժամանակավոր աշխատատեղերի կորուստ	Կարճաժամկետ	Տեղեկատվական աշխատանք համայնքի հետ
5	Էկոհամակարգային ազդեցություն	Միջավայրի վրա նվազագույն ազդեցություն	Ցածր	Տարածքի վերականգնում և հողային ռեկուլտիվացիա

5.4 Կոմուլատիվ ազդեցությունների գնահատում

Կոմուլատիվ (գումարային) ազդեցությունների գնահատումը իրականացվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատաբժշկական կենտրոնը կառուցվում է արդեն գործող առողջապահական համալիրի (Բերդ բժշկական կենտրոնի) տարածքում և չի հանդիսանում առանձին արտադրական օբյեկտ, այլ լրացնում է բժշկական ծառայությունների շղթան:

I. Տարածքի առկա գործունեությունները

Բերդ քաղաքի բժշկական գոտում ներկայում գործում են՝

- Բերդի բժշկական կենտրոնը (հիվանդանոցային, ախտորոշիչ և լաբորատոր ծառայություններ),
- Քաղաքային ամբուլատորիա և շտապ օգնության կայան,
- Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի ենթակայությամբ գործող խմելու ջրի և կոյուղու համակարգ,
- Քաղաքային էլեկտրամատակարարման և գազամատակարարման ենթակայաններ:

Այս բոլոր օբյեկտները ունեն կայուն և սահմանափակ բնապահպանական ազդեցություն, որոնք վերահսկվում են գործող նորմերով:

II. Գումարային ազդեցությունների վերլուծություն

Բաղադրիչ	Գործող ազդեցություն	Նախագծով ավելացող ազդեցություն	Ընդհանուր գնահատում
Օդի որակ	Կաթսայատան և տրանսպորտային	Նոր դիախերձարանի կաթսայատան	Ազդեցությունները գումարվում են, բայց չեն գերազանցում

	արտանետումներ՝ նվազ մակարդակով	աշխատանք՝ նույն գոտում	թույլատրելի սահմանները (ՄԹՍ)
Ջրային միջավայր	Արդեն գործող բուժհաստատության կոյուղաջրեր	Նոր օբյեկտի կեղտաջրերի միացում նույն տեղային մաքրման կայանին	Ազդեցությունը վերահսկվում է, կումուլատիվ ազդեցություն չկա
Հողային միջավայր	Գոյություն ունեցող շինհրապարակային մակերեսներ	Նոր շինարարությունը կիրառում է նույն հողատարածքը	Ավելացվող ազդեցություն չկա՝ հողերի ֆունկցիան չի փոխվում
Բուսական և կենդանական աշխարհ	Տարածքը շինարարական և քաղաքային միջավայր է	Բուսածածկի մասնակի փոփոխություն (կանաչապատում հետո վերականգնվում է)	Ազդեցությունը նվազագույն է, կարճաժամկետ
Աղմուկ և թրթռանք	Գոյություն ունեցող տրանսպորտային աղմուկ՝ ցերեկային ժամերին	Շինարարական և շահագործման ընթացքում ժամանակավոր ավելացում	Գումարային ազդեցությունը թույլատրելի սահմաններում
Սոցիալական միջավայր	Գործող բուժհաստատությունների առկայություն	Նոր ծառայության ավելացում (դատաբժշկական փորձաքննություն)	Դրական կումուլատիվ ազդեցություն՝ բժշկական ենթակառուցվածքի բարելավում

III. Գումարային ազդեցությունների բնույթը

- **Տարածքային համընկնումը՝** բոլոր ազդեցությունները կենտրոնացած են նույն բժշկական գոտում, որտեղ այլ արդյունաբերական կամ բնապահպանական ծանրաբեռնվածություն չկա:
- **Ժամանակային համընկնումը՝** շինարարական աշխատանքները ժամանակավոր են և չեն համընկնում բժշկական կենտրոնի առավել ակտիվ ժամերի հետ:
- **Ազդեցության ուժգնությունը՝** բոլոր ֆիզիկական և քիմիական գործոնները պահպանվում են թույլատրելի սահմաններում (ՇՄՆ, ՄՆ և ՄԹՍ նորմեր):
- **Վերահսկելիություն՝** ազդեցությունները վերահսկվում են ՇՄԱԳ հաշվետվությամբ նախատեսված մշտադիտարկման պլանի միջոցով:

IV. Եզրակացություն

Կումուլատիվ ազդեցությունների գնահատման արդյունքում պարզվել է, որ նախատեսվող գործունեությունը **չի առաջացնում էական գումարային կամ երկարաժամկետ բացասական ազդեցություն** շրջակա միջավայրի բաղադրիչների վրա:

Բոլոր ազդեցությունները՝ մթնոլորտային, ջրային, աղմկային և սոցիալական, մնում են թույլատրելի սահմաններում և վերահսկվում են բնապահպանական կառավարման պլանի միջոցներով:

Այսպիսով, դիտարկարանի կառուցումն ու շահագործումը համատեղելի են տարածքի գործող առողջապահական ենթակառուցվածքների գործունեության հետ և չեն ստեղծում նոր կումուլատիվ ռիսկեր:

6. Կարգավորող իրավական և մեթոդական փաստաթղթեր

Սույն գլուխը ներկայացնում է «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից նախատեսվող գործունեության՝ ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքի Ա. Մանուկյան 25/1 հասցեում դիտարկարանի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքային նախագծին առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթերը, ներառյալ բնապահպանական քաղաքականությունը, շրջանակային և ճյուղային օրենսդրական ակտերը՝ հողային հարաբերությունների, առողջության և անվտանգության հարցերով:

ՀՀ ազգային օրենսդրություն

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի “Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը”:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. “Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը”:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքը ՀՕ 121 /ընդունվել է 1994թ, լրամշակված 2022/

Օրենքը կարգավորում է՝ մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը. Ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են “Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (29.05.2006 թիվ 750-Ն), “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277- Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.1.2017 թիվ 1404-Ն) որոշումները:

“Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը” ընդունվել է ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ. N 365-Ն հրամանով:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերեսային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերով:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջև, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

“Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին”

Հայաստանի Հանրապետության օրենք (2023թ)

Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության, համաձայն “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” 2023թ.-ի Հայաստանի Հանրապետության օրենքի (03.05.23թ.ՀՕ-150-Ն) /Այսուհետ՝ Օրենք/:

Վերը նշված Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործունեության տեսակներ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված գործունեություն, իսկ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով նախատեսված դեպքերում՝ նաև դրանց վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում, ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների դեպքում՝ շահագործումից հանում (ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտ հանդիսացող գերեզմանոցի դեպքում՝ փակում) կամ քանդում կամ նախագծային փոփոխություն. սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները:

Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա”, ”Բ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են ելնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու տեղադրությունը և դրանցով պայմանավորված՝ հնարավոր գումարային, ամբողջական ազդեցության աստիճանը:

Հիմք ընդունելով ներկայիս Օրենքի հոդված 37-ից «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բխող ենթաօրենսդրական ակտերի ուժի մեջ մտնելու ժամկետները, փորձաքննական գործընթացը նախատեսվում է իրականացնել համաձայն սույն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից ելնելով՝ «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին չավարտված փորձաքննության գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են փորձաքննության գործընթացն սկսվելու պահին գործող իրավական ակտերով»:

Այսինքն փորձաքննությունն իրականացվելու է առաջնորդվելով նոր Օրենքի 12-րդ հոդվածով թվարկված նախատեսվող գործունեության տեսակները՝ ըստ բնագավառների, ինչպես նաև դրանց համար նախատեսված՝ փոփոխված, պետական տուրքի չափը:

Նախատեսվող գործունեությունը համաձայն սույն Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի ա) ենթակետի 'երկրաբանական ուսումնասիրություններ' 1000 գծամետրից ավելի ստորերկրյա լեռնային փորվածքներով կամ 1000 գծամետր խորությունը գերազանցող հորատանցքի հորատման դեպքում» «Ա» կատեգորիայի գործունեություն է և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացն իրականացվում է 40 աշխատանքային օրվա ընթացքում՝ 1 փուլով 2 հանրային քննարկումների իրականացմամբ: Փորձաքննության գործընթացների լիարժեքությունն ապահովելու համար լրացուցիչ աշխատանք կատարելու կամ այլ տեղեկատվություն ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում լիազոր մարմինը փորձաքննական գործընթացի ժամկետը կարող է երկարաձգել մինչև 30 աշխատանքային օրով, որի մասին ծանուցում է նախաձեռնողին՝ ծանուցման մեջ նշելով կատարվելիք լրացուցիչ աշխատանքի կամ ձեռք բերվող անհրաժեշտ տեղեկատվության մասին:

Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենք,

սույն օրենքով կարգավորվում են կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման և իրականացման, հիվանդությունների

իմունականխարգելման, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների:

Հանրային առողջապահության մասին ՀՀ օրենք, սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական եւ կազմակերպական հիմքերը, ինչպես նաեւ պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար եւ վտանգավոր գործոնների ազդեցությունը եւ բարենպաստ պայմաններ ապահովում նրա եւ ապագա սերունդների կենսունակության համար:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք

Օրենքը ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը: .

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք
(23.11.1999 թ.)

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են “Թափոնների մասին” ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

ՀՀ բնապահպանության նախարարը 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է

Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

«Օգոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենք (27.11.2006թ.) - կարգավորվում են օգոնային շերտը քայքայող նյութերի և այդ նյութերին այլընտրանք հանդիսացող ջերմոցային գազերի՝ հիդրոֆտորածխածինների՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրության, ներմուծման, արտահանման և տարանցիկ տեղափոխման նկատմամբ սահմանափակումները և դրանց հետ կապված հարաբերությունները՝ «Օգոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի և «Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության շրջանակներում կնքված միջազգային համապատասխան պայմանագրերը վավերացրած երկրների հետ:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման **«Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում»** N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

Նշված սանիտարական նորմերով սահմանվել են արտադրական, սպասարկման և այլ տեսակի գործունեության արդյունքում առաջացող աղմուկի ազդեցության մակարդակը և ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման **«Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը»** ՀՆ N 2.2.4-009-06 հաստատելու մասին”

Հիգիենիկ նորմերը սահմանում են թրթռման դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման սահմանային թույլատրելի

մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման թույլատրելի մակարդակները:

- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:
- ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:
- ՀՀ առողջապահության նախարարի 04.03.2008թ.-ի N03 հրաման «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի հունիսի 25-ի N 12-Ն հրամանով սահմանված ՀՀՀՆ 31-03.07-2024 «Առողջապահական կազմակերպություններ. հիվանդանոցային բուժօգնության (ստացիոնար) օբյեկտների շենքեր և շինություններ» ՀՀ Շինարարական նորմեր
- ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ.-ի օգոստոսի 28 թիվ 11 հրաման «Ախտաբանաանատոմիական բաժանմունքների, հյուսվածքաբանական լաբորատորիաների տեղակայմանը, կառուցվածքին, ներքին հարդարմանը, գույքի և սարքավորումների շահագործմանը, միկրոկլիմային, օդափոխանակությանը, ջրամատակարարմանը և ջրահեռացմանը, սանիտարահակահամաճարակային ռեժիմին ներկայացվող պահանջներ» N 2-III-3.3.1.-026-12 սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը
- ՀՀ Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 92 հրաման «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում դատաբժշկական փորձաքննությունների կազմակերպման և իրականացման չափորոշիչը» հաստատելու

- ՀՀ Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշումը «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու մասին»

Միջազգային համաձայնագրեր

Ի լրումն վերը թվարկված նորմատիվային ակտերի, մշակվել են բնապահպանական ուղղվածության բազմաթիվ ռազմավարական, հայեցակարգային և ազգային ծրագրեր, ինչպես նաև ՀՀ կողմից ստորագրվել և վավերացվել են մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ:

Ստորև բերված են ՀՀ կողմից ստորագրված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները և դրանց կարգավիճակը ՀՀ-ում:

ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները

NN	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1971	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.		
2	ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.)	1993	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
3	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.)	1994	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
4	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	2005		2002	
5	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (ժնև, 1979թ.)	1983		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
	Կայուն օրգանական աղտոտիչների մասին արձանագրություն, (Ստոկհոլմ, 2001)	2004	2001	2003	
	Էվտրոֆիկացիայի և գետնամերձ օգոնի մասին արձանագրություն, (Gothenburg, 1999)		1999		
6	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո, 1991թ.)	1997		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև, 2003թ.)	2010	2010	2011	

7	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
8	ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
9	«Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
	«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.)	1989		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
10	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիոս1998թ.)	2001	1998	2001	

7. Պահանջվող բնական ռեսուրսներ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Բետոնի պատրաստման ժամանակ ջուրը օգտագործվում է խառնուրդի մեջ և կախված է բաղադրության բաղադրիչներից, բետոնի տեսակից և նախագծի պահանջներից: Միջինացված, մեկ խորանարդ մետր բետոն պատրաստելու համար օգտագործվում է միջինում 150-200 լիտր ջուր:
- Հողային աշխատանքների ընթացքում ջրի պահանջը կարող է զգալիորեն տատանվել՝ կախված հողի տեսակներից, աշխատատարությունից և եղանակային պայմաններից: Հողը կոմպակտացնելու համար միջինում ծախսվում է 5-20 լիտր ջուր մեկ քառակուսի մետրի համար:
- Շինարարական տեխնիկայի սպասարկման և լվացման, խոշոր սարքավորումների լվացման համար ծախսվում է 200-500 լիտր ջուր՝ կախված յուրաքանչյուր տեխնիկայի չափերից՝ շաբաթական:
- Շինարարության ընթացքում ջուրը օգտագործվում է օդում փոշե մասնիկները նվազեցնելու համար: Շինհրապարակների վրա, հատկապես՝ չոր շրջաններում, օգտագործվում է մոտ 1-3 լիտր ջուր մեկ քառակուսի մետրի համար՝ փոշու վերահսկման նպատակով:

- o Խմելու ջրի և սննդի պատրաստման համար օրական օգտագործվում է մոտ 3-5 լիտր ջուր մեկ անձի համար:
- o Անձնական հիգիենա (մոտավոր՝ 50-100 լիտր/օր), նորման ներառում է ցնցուղ, լոգանք, ձեռքերի լվացում, և այլ հիգիենիկ գործողություններ:
- o Սանհանգույց և զուգարան (մոտավոր՝ 30-50 լիտր/օր)
- o Ամենօրյա մաքրություն (մոտավոր՝ 5-10 լիտր/օր), ջրի օգտագործումը ներառում է գրասենյակային և կեցության համար նախատեսված տարածքների հատակների մաքրման համար:

Ջրօգտագործման նպատակը		Քանակները	Նորմատիվ	Ժամկետ	Ջրօգտագործման ծավալ մ ³	Ջրահեռացման ծավալ մ ³
Տեխնիկական նպատակներով ջրօգտագործում	Բետոնի պատրաստում	150 մ ³	200 լ/մ ³		30	
	Հողային աշխատանքներ	1000 մ ³	20 լ/մ ²		20	
	Շին տեխնիկայի սպասարկում	4 հատ	350 լ/հատ	51 շաբաթ	71,4	71,4
	Փոշենստեցում	220 մ ²	3 լ/մ ²	320 օր	211	
Կոմունալ կենցաղային ջրօգտագործում	Խմելու	30 հոգի	250 լ/հոգի	360 օր	2700	2700
	Անձնական հիգիենա					
	Սանհանգույց և զուգարան					
	Ամենօրյա մաքրություն					

Ընդհանուր ջրօգտագործման ծավալը կկազմի 3032,4 մ³, որից 2700 մ³ խմելու որակի ջուր: Ջրահեռացման ծավալը 2771,4մ³ դեպի ջրահեռացման համակարգ:

Կանաչապատման և բարեկարգման համար ոռոգման ջուրը կապալառու կազմակերպության միջոցներով պետք է իրականացնել օրինական ջրօգտագործման թույլտվություն ունեցող ջրային աղբյուրից կամ համայնքի համաձայնությամբ, համայնքային ոռոգման համակարգից, ջրատար մեքենայի օգնությամբ:

Շին աշխատանքների ժամանակ աղտոտված կեղտաջրերի արտահոսք դեպի ջրային ռեսուրսներ չի իրականացվելու: Հեռացվող հոսքաջրերը մաքրում չպահանջող հոսքաջրեր են, որոնք պետք է ուղղվեն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի ենթակայությամբ գործող կոյուղաջրերի հեռացման համակարգ:

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Թափոնների հիմնական տեսակները շինարարության ընթացքում

- Բետոնային թափոններ. Բետոնային խառնուրդների ավելորդ մնացորդները, անորակ բետոն:

- Աղյուսի և քարերի մնացորդներ. պատերի կառուցման ժամանակ օգտագործված նյութերը, որոնք մնում են, կամ վնասված շինանյութերը որոնք դառնում են թափոններ:

- Փայտյա թափոններ. Շինարարական փայտանյութերի կտորները, դեկորատիվ աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդները և փչացած նյութերը:

- Մետաղների կտորներ. Շինարարությունում օգտագործվող մետաղական կոնստրուկցիաների, ինչպիսիք են ամրանների, խողովակների և մետաղական կարկասների մնացորդներ, խոտանված կոնստրուկցիաներ:

- Փաթեթավորման նյութեր. Շինարարության ընթացքում օգտագործվող նյութեր և առարկաներ, որոնք ունեն արտաքին փաթեթավորում, ներառում են մեծ քանակությամբ թղթե նյութեր, որոնք դառնում են թափոններ:

- Հողային աշխատանքների ընթացքում հողային զանգված և գրունտ: Հողային հանվածքներ, ծածկագիր 3140110101005, 5-րդ դաս: Ընդհանուր հանված հողի ծավալը կկազմի 450մ³: Հետլիցքի համար առկա ծավալը գնահատվել է՝ 180 մ³: Ավելցուկային 270 մ³ հողային զանգվածը կտեղափոխվի համայնքային կառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

- Կենցաղային աղբ

Շինարարության ընթացքում առաջացող թափոնները կարևոր խնդիր են, սակայն դրանց արդյունավետ կառավարելու դեպքում խնայվում են ռեսուրսները, նպաստում են շրջակա միջավայրի պահպանմանը, տնտեսական ծախսերի նվազեցում և սոցիալական կայունություն է ապահովվում:

Շինարարական տեխնիկայի աշխատանքների ընթացքում գոյանում են յուղոտված լաթերի, բանեցված յուղերի, բանեցված անվադողերի թափոններ, և քանի որ վերջիններս փոխարինվում են մասնագիտացված ավտոտեխսպասարկման կայաններում ապա տարածքում կուտակում՝ պահում չի իրականացվում:

Թափոնների կառավարման առաջարկներ³

Թափոնի անվանում	Հավանական քանակները	Օրենսդրական պահանջ	Առաջարկվող գործողություններ
Բետոնային թափոններ, Վդաս	0,3-0,5տ	Ոչ լավորակ բետոնային կառուցվածքներ և դետալներ, ծածկագիր 3140270501995 ⁴	Ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր
Աղյուսի և քարերի մնացորդներ, Վդաս	0,5- 0,8 տ	Աղյուսի ջարդոն, ծածկագիր 3140070501005	
Փայտյա թափոններ, Վդաս	0,1տ	Շինարարության փայտանյութի թափոններ, ծածկագիր 1720200099005	
Մետաղների կտորներ, Վդաս	0,3-0,5տ	Չաղտոտված պողպատե մետաղամնացուկ, ծածկագիր 3512011801995	Հանձնվում է մետաղածուլական ըկերություններին, վերամշակման նպատակով
Փաթեթավորման նյութեր, Վդաս	0,1տ	Չաղտոտված սովարաթղթե փաթեթավորման թափոններ, ծածկագիր 1871020201005	Հանձնվում է վերամշակման նպատակով
Հողային զանգված և գրունտ, Վդաս	270 մ ³	Հողային հանվածքներ, ծածկագիր 3140110101005	Օգտագործվում է նախագծի տարածքի ընդհանուր պլանավորման և հարթեցման աշխատանքներում իսկ ավելցուկը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր
Կենցաղային աղբ, IV դաս	70*30*2=4,2տ	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), ծածկագիր 91200400 01 00 4	Ենթակա է հավաքման և համայնքային աղբավայրում տեղադրման
Հագուստի և գործվածքի անափտան մնացորդներ IV դաս	50-100կգ	Յուղոտված լաթեր, Ծածկագիր 5820060001014	Ենթակա է հավաքման և համայնքային աղբավայրում տեղադրման

³ Վտանգավոր թափոնների գործածության ոլորտը համարվում է լիցենզավորվող գործունեություն

⁴ Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի «ՀՀ տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրաման

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ

Շինարարական փուլում մթնոլորտային արտանետումները կարող են որոշակի ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Այս գործընթացներում արտանետումները հիմնականում պայմանավորված են հետևյալ գործոններով՝

- Հողային աշխատանքներ՝ փոշի և կոշտ մասնիկներ (PM10, PM2.5):
- Շինարարական տեխնիկայի օգտագործում՝ բեռնատարներ, էքսկավատորներ և այլ մեքենաներ, որոնք աշխատում են դիզելային կամ բենզինային շարժիչներով, արտանետում են ածխածնի մոնօքսիդ՝ շմոլ գազ (CO), ազոտի օքսիդներ՝ երկօքսիդի հաշվարկով (NO_x), ծծմբային անհիդրիդ (SO₂), ածխաջրածիններ (C_xH_y) և պինդ մասնիկներ (ՊՄ):
- Շինարարական գործողությունների ընթացքում, օրինակ՝ քանդման կամ ավազի ու ցեմենտի օգտագործման ժամանակ, փոշի և կոշտ մասնիկներ (PM10, PM2.5):

Հիմքերի պատրաստման, տարածքի բարեկարգման և ասֆալտապատման ժամանակ փոշու արտանետման հաշվարկը՝

$$A=G*k1*k2*k3*k4*k5*k7*B$$

Որտեղ՝

Հանույթի և բեռնվող նյութերի քանակը, G, T

Ֆրակցիայի բաժնեմասը, K1

Աէրոզոլի փոխանցվող փոշու բաժնեմասը, K2

Տեղանքի կլիմայական պայմանները հաշվի առնող գործակիցը, K3

Նյութի խոնավությունը հաշվի առնող գործակից, K5

Նյութի խոշորությունը հաշվի առնող գործակից, K7

Տեղանքի պայմանները հաշվի առնող գործակից, K4

Թափման բարձրությունը հաշվի առնող գործակից, B

Փոշու արտանետումների հաշվման բանաձևը տ/2 ժամ

Հողային աշխատանքներ

$$A= 450\times0.04\times0.01\times1.2\times0.7\times0.4\times0.5=0.03$$

Հետլիցքի աշխատանքներ

$$A = 180 \times 0.04 \times 0.01 \times 1.2 \times 0.7 \times 0.4 \times 1 \times 0.5 = 0.012$$

Խճի փոման աշխատանքներ

$$A = 100 \times 0.04 \times 0.01 \times 1.2 \times 0.7 \times 0.4 \times 1 \times 0.5 = 0.007$$

Ավազ և Ցեմենտ

$$A = 10 \times 0.04 \times 0.01 \times 1.2 \times 0.7 \times 0.4 \times 1 \times 0.5 = 0.0007$$

Դիզելային վառելիք այրման արգասիքների հաշվարկը՝ բեռնատար ավտոտրանսպորտից արտանետումները հաշվարկելու համար օգտագործվել են արտանետումների գործակիցները ծախսվող վառելիքի 1տ -ի համար:

Միջին շին տեխնիկայի աշխատանքային ժամանակ դիզելառեկի ծախսը կկազմի 15կգ/շին ժամ: Ամբողջ շինարարական աշխատանքների համար հավանական դիզ վառելիքի ծախսը կկազմի 50տ:

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, կգ/տ	Արտանետումները, տ/տարի
Շին տեխնիկա	CO	316.1	15.8
	NO _x	60.1	3
	C _x H _y	2.4	0.12
	ՊՄ	0.72	0.036

ԱՂՄՈՒԿ և ԹՐԹՈՒՄ

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N 2-III-11. 3 սանիտարական նորմի:

Շինարարական աշխատանքների ընթացքում աշխատատեղերում և մոտակա բնակելի տարածքներում առաջացող աղմուկի և թրթռումների

մակարդակների գնահատման համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ գործոնները.

Աղմուկի մակարդակի գնահատում (dB)

Գործոններ՝

- Օգտագործվող սարքավորումներ՝ բուլդոզեր, էքսկավատոր, հորատման սարքավորումներ և այլն:
- Սարքավորումների աղմուկի մակարդակներ՝ սարքերի արտադրական բնութագրերում նշված են աղմուկի ելքային արժեքները (սովորաբար դեցիբելներով՝ dB):
- Հեռավորություն աղմուկի աղբյուրից՝ աղմուկի մակարդակը նվազում է հեռավորության ավելացման հետ համաձայն աղմուկի տարածման օրենքների:
- Շրջակա միջավայրի պայմաններ՝ պատնեշների առկայությունը, օդի խոնավությունը և այլն:

Հաշվարկ՝

Աղմուկի մակարդակի նվազումը (ըստ հեռավորության) առաջարկվում է հաշվարկել այս բանաձևով՝

$$L_p = L_w - 20 \log_{10}(r) - 8$$

որտեղ՝

L_p — աղմուկի մակարդակը ընդունող կետում,

L_w — աղմուկի մակարդակը ծագման աղբյուրում,

r — հեռավորությունը աղմուկի աղբյուրից (մետրերով),

8 —միջին կորուստ:

Նախատեսվող գործունեության շինարարական փուլում, բնակելի տարածքում՝ հասարակական և բնակելի շենքերի սենքերում թափանցող աղմուկի առավելագույն և համարժեք ձայնի մակարդակների թույլատրելի նշանակությունները պետք է չգերազանցի⁵

⁵ Համաձայն «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերի

Աշխատանքային ժամերին (07:00–23:00):

Բնակելի տարածքների համար թույլատրելի առավելագույն մակարդակը կազմում է **55dB**: Այս արժեքը կախված է աղմուկի բնույթից (հանգիստ ֆոնային կամ պիկավոր աղմուկ):

Գիշերային ժամերին (23:00–07:00):

Աղմուկի մակարդակը պետք է նվազեցվի՝ թույլատրելի առավելագույն մակարդակը կազմում է **45 dB**:

Շինարարական աշխատանքների կատարում արտադրական սենքերի և կազմակերպությունների տարածքների մշտական աշխատատեղերում՝ թույլատրելի առավելագույն մակարդակը կազմում է **80 dB**:

Նախատեսվող գործունեության ընթացքում օգտագործվող տեխնիկական միջոցներից և մեխանիզացիայից հնարավոր աղմուկի մակարդակները ներկայացված են աղյուսակային տեսքով: Աղմուկի մակարդակը նախատեսվող գործունեության ամենամոտ զգայուն կլանիչների նկատմամբ կանխատեսվում է ոչ էական, քանի որ ամենամոտը գտնվում են շին հրապարակից 200մ հեռավորության վրա:

Աշխատակիցների համար սահմանվում է պայման՝ ականջապաշտպանիչ միջոցների կիրառում (85 դԲ-ից բարձր աղմուկի դեպքում):

Տեխնիկական միջոցի անվանումը	Ընդունված աղմուկի մակարդակներ	աղբյուր
Ավտոկռունկ	- Օպերատորի խցիկում՝ 65-75 դԲ - Շարժիչի և մեխանիզմների աղմուկ՝ 75-85 դԲ - Արտաքին աղմուկ (աշխատանքային տարածքում, մոտ 10 մ հեռավորության վրա)՝ 80-95 դԲ	Աշխատակիցների համար
Էքսկավատոր (CAT, Komatsu, Volvo)	- Օպերատորի խցիկում ներսում՝ 70-75 դԲ - Խցիկից դուրս (աշխատանքի ընթացքում)՝ 85-110 դԲ - Շարժիչի աղմուկ՝ 75-100 դԲ - Հիդրավլիկ համակարգի աղմուկ՝ 70-90 դԲ	
Բետոնապոմպ	- Օպերատորի խցիկում՝ 70-80 դԲ - Շարժիչի աղմուկ՝ 80-95 դԲ - Հիդրավլիկ պոմպերի և մղման մեխանիզմների աղմուկ՝ 85-100 դԲ - Արտաքին աղմուկ (10 մ հեռավորության վրա)՝ 90-110 դԲ	
Ավտոինքնաթափ	- Օպերատորի խցիկում՝ 70-85 դԲ - Շարժիչի աղմուկ (դիզելային կամ բենզինային)՝ 80-100 դԲ	

	• Արտաքին աղմուկ (10 մ հեռավորության վրա, ընթացքի ժամանակ)՝ 85-105 դԲ • Բեռնման/բեռնաթափման ժամանակ՝ 90-110 դԲ	
Ավտոբետոնա խառնիչ (բետոնամշակիչ)	• Օպերատորի խցիկում՝ 70-80 դԲ • Շարժիչի աղմուկ (դիզելային կամ բենզինային)՝ 80-100 դԲ • Հիդրավլիկ պոմպերի և խառնարանի աղմուկ՝ 85-100 դԲ • Արտաքին աղմուկ (10 մ հեռավորության վրա, աշխատանքի ընթացքում)՝ 90-110 դԲ • Բետոնի բեռնման/բեռնաթափման ժամանակ՝ 95-110 դԲ	

Թրթռման մակարդակի գնահատում

Գործոններ՝

- Սարքավորումների տեսակ և հզորություն՝ հորատման սարքավորումներ, բետոնային կտրող մեքենաներ և այլն:
- Հողային պայմաններ՝ փխրուն հողեր, կավային կամ քարային հիմքեր:
- Հեռավորությունը թրթռման աղբյուրից:

Հաշվարկ՝

Թրթռման մակարդակի նվազումը գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$V_p = V_s \cdot e^{-\alpha \cdot r}$$

որտեղ՝

V_p — թրթռման մակարդակը տվյալ կետում,

V_s — թրթռման մակարդակը ծագման աղբյուրում,

α — հողի վրա թրթռման նվազման գործակիցը,

r — հեռավորությունը թրթռման աղբյուրից:

Թրթռման ազդեցությունը գնահատվում է արագացման (մ/վ²), արագության (մմ/վրկ) կամ դիսպլացեմենտի (միկրոն) մակարդակներով: Նախատեսվող գործունեության շինարարական փուլում, տարբեր նորմատիվներ կարող են կիրառվել, բնակելի տարածքների համար ընդհանուր արժեքներ են.

- Օրվա ընթացքում՝ 1–3 մմ/վրկ (թրթռման արագություն):
- Գիշերային ժամերին՝ < 1 մմ/վրկ:


Աշխատատեղերում թրթռման թույլատրելի մակարդակները սահմանվում են ըստ միջազգային և ազգային նորմերի⁶ ISO 2631-1 ("Մարդկանց վրա մեխանիկական թրթռման ազդեցություն"), ISO 5349 (ձեռքի-բազուկային թրթռում), և տեղական օրենքներով:

Ցուցանիշ	Թույլատրելի մակարդակ
Կանխարգելիչ մակարդակ	1.15 մ/վ² (հետադարձ արագացում) ՝ խրախուսվում է չգերազանցել, երբ թրթռումն ակտիվ աշխատանքային գործընթացի մասն է:
Թրթռման ազդեցության սահմանաչափ	2 մ/վ² (հետադարձ արագացում) ՝ երկարաժամկետ ազդեցության դեպքում համարվում է վտանգավոր:
Աշխատանքային օրվա համար (8 ժամ)	0.5 մ/վ² (հետադարձ արագացում) ՝ երկարաժամկետ ազդեցության դեպքում չի առաջացնում առողջության լուրջ խնդիրներ:

ՇՐՋԱՆԻ ՍԵՅՍՄԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.3g$ արագացմամբ:

⁶ «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը» ՀՇՆ N 2.2.4-009-06



8. Արտակարգ իրավիճակների կառավարում

Նախատեսվող գործունեության ընթացքում արտակարգ իրավիճակները կարող են ծագել տարբեր պատճառներով՝ տեխնիկական անսարքություններից, բնական աղետներից կամ մարդկային սխալներից: Այս իրավիճակները կարող են առաջացնել վթարներ, վնասվածքներ և նախագծի դադարեցում: Արտակարգ իրավիճակների կառավարման արդյունավետությունը շատ կարևոր է՝ աշխատողների և այլ անձանց անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև նախագծի ամբողջականությունը պահպանելու համար:

Արտակարգ իրավիճակների հավանական ռիսկերն են՝

1. Տեխնիկական վթարներ

- Սարքավորումների անսարքություն. Շինարարական մեքենաների և սարքավորումների տեխնիկական անսարքությունը կարող է հանգեցնել վթարների: Օրինակ՝ վերամբարձ մեքենաների խափանումը, էլեկտրական սարքերի խաթարումը:

- Շենքերի փլուզում. Եթե շինարարական աշխատանքները սխալ են կատարվում կամ նյութերը անորակ են, կարող է առաջանալ շենքերի կամ կառույցների փլուզման վտանգ:

2. Բնական աղետներ

- Երկրաշարժեր, փոթորիկներ, հեղեղումներ. Բնական աղետները կարող են լուրջ վնաս հասցնել նախագծին: Օրինակ՝ հողի շարժման հետևանքով կարող են փլվել կառույցները, իսկ ուժեղ քամիները կարող են վտանգել բարձրության վրա աշխատող աշխատողներին:

- Ջրեր սելավահոսքեր և փլուզումներ. Եթե շինարարական աշխատանքների տարածքում հանկարծակի հեղեղումը կամ հողերի սողքը առաջանա կարող են լուրջ ռիսկեր առաջանալ:

3. Հրդեհներ

- Շինարարական նյութերը (օրինակ՝ փայտ, քիմիական նյութեր) կարող են հրդեհավտանգ լինել: Աշխատանքների ընթացքում առաջացող կայծերը կամ էլեկտրական սարքավորումների անսարքությունը կարող են առաջացնել հրդեհ:

4. Աշխատանքի ընթացքում վնասվածքներ և մահեր

- Վատ կազմակերպված աշխատանքային պայմանները կամ անձնական պաշտպանիչ միջոցների բացակայությունը կարող են հանգեցնել աշխատողների վնասվածքների կամ մահվան՝ օրինակ՝ ընկնում բարձրություններից, բեռների փլուզում, սարքավորումների հետ աշխատելու ժամանակ սխալ օգտագործման հետևանքով:

5. Վտանգավոր նյութերի արտահոսք

- Քիմիական նյութերը կամ գազերը, որոնք օգտագործվում են շինարարական աշխատանքներում, կարող են արտահոսել, ինչը լուրջ վտանգ է ստեղծում ինչպես աշխատողների, այնպես էլ շրջակա միջավայրի համար:

Արտակարգ իրավիճակների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ունենալ հստակ պլան և միջոցառումներ, որոնք կօգնեն կանխել, պատասխանել և վերականգնել ցանկացած նման իրավիճակ:

1. Վտանգների գնահատում

- Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, անհրաժեշտ է կատարել ռիսկերի գնահատում՝ պարզելու հնարավոր արտակարգ իրավիճակները:

- Այս ռիսկերի հիման վրա մշակվում է արտակարգ իրավիճակների պլան, որը կներառի վթարային արձագանքման մեխանիզմներ:

2. Արտակարգ իրավիճակների պլանավորում

- Մշակվում են տարհանման ուղիներ և ծրագրեր, որոնք պետք է լինեն պարզ, հասկանալի և հասանելի բոլոր աշխատողներին:

- Տեղադրվում են հրշեջ համակարգեր, առաջին օգնության կայաններ, և այլ անհրաժեշտ սարքավորումներ՝ արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման համար:

3. Արտակարգ իրավիճակներում աշխատողների ուսուցում

- Աշխատողները պետք է անցնեն համապատասխան ուսուցում՝ արտակարգ իրավիճակներում արձագանքելու և տարհանման գործողությունների համար:

- Պարբերաբար պետք է կազմակերպվեն վարժանքներ՝ արտակարգ իրավիճակների պայմաններում:

4. Մշտական մոնիտորինգ և վերանայում

- Արտակարգ իրավիճակների պլանը պետք է պարբերաբար վերանայվի և արդիականացվի՝ ելնելով նոր վտանգներից և տեխնիկական փոփոխություններից:

- Շինհրապարակը պետք է մշտապես մոնիտորինգի ենթարկվի՝ կանխելու վտանգավոր իրադարձությունները:

5. Համագործակցություն արտակարգ իրավիճակների պատասխանատու պետական ծառայությունների հետ

- Անհրաժեշտ է մշտապես համագործակցել հրշեջ ծառայությունների, բժշկական անձնակազմի և փրկարար ծառայությունների հետ՝ արտակարգ իրավիճակներում արագ արձագանք ապահովելու համար:

Արտակարգ իրավիճակներում արձագանքման քայլեր

1. Արագ տարհանում

- Վտանգավոր իրավիճակների ժամանակ աշխատողները պետք է արագորեն դուրս բերվեն անվտանգ գոտիներ՝ ըստ տարհանման պլանի:

2. Առաջին օգնության տրամադրում

- Վնասված աշխատողներին պետք է տրամադրվի առաջին օգնություն՝ մինչև բժշկական անձնակազմի ժամանումը:

3. Հրդեհների մարում

- Պետք է օգտագործվեն տեղադրված հրշեջ միջոցները՝ հրդեհների արագ մարելու համար:

4. Աղետի վերլուծություն և վերականգնում

- Արտակարգ իրավիճակից դաքում պետք է իրականացվի վերլուծություն՝ հասկանալու դեպքի պատճառները և ապահովելու, որ նմանատիպ իրավիճակներ չեն կրկնվի:

Արտակարգ իրավիճակների ճիշտ կառավարումը ոչ միայն նվազեցնում է վնասները և ռիսկերը, այլև ապահովում է շինարարական նախագծի անխափան իրականացումը, ինչը կարևոր է ինչպես աշխատողների, այնպես էլ նախագծի ներդրողների համար:

9. Մարդու առողջություն և Աշխատանքի անվտանգություն

Նախատեսվող գործունեությունը՝ Բերդ համայնքում երկհարկանի դիահերձարանի կառուցումը և շահագործումը, առնչվում է առողջապահական բնույթի որոշակի ռիսկերի, որոնք պայմանավորված են ինչպես շինարարական, այնպես էլ շահագործման գործընթացներում առաջացող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական գործոններով:

I. Շինարարական փուլ

Ռիսկի տեսակ	Նկարագրություն	Հսկողություն և մեղմման միջոցառումներ
Աղմուկ և թրթռանք	Շինտեխնիկայի աշխատանքից առաջացող աղմուկը կարող է ազդել մոտակա բնակավայրերի վրա	Աշխատանքները կատարվում են միայն թույլատրելի ժամերին (մինչև 19:00), կիրառվում են տեխնիկապես նորմավորված սարքավորումներ

Փոշի և մթնոլորտային արտանետումներ	Շինհրապարակի հողային աշխատանքներից առաջացած փոշին կարող է ազդեցություն ունենալ շինաշխատողների և հարակից տարածքների վրա	Տարածքի պարբերական խոնավեցում, փոշեհեռացման միջոցառումներ
Ֆիզիկական վնասվածքներ	Շինաշխատանքների ընթացքում աշխատողների ֆիզիկական վնասվածքների վտանգ	Աշխատանքները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոններով, ապահովված են անհատական պաշտպանիչ միջոցներով
Թափոնների ոչ պատշաճ պահպանում	Կենցաղային և շինարարական թափոնների կուտակումը կարող է հանգեցնել հակահիգիենիկ պայմանների	Կազմակերպվել է առանձին վայրեր թափոնների ժամանակավոր կուտակման և տեղափոխման համար

II. Շահագործման փուլ

Ռիսկի տեսակ	Նկարագրություն	Կանխարգելիչ միջոցառումներ
Բժշկական և կենսաբանական թափոնների հետ շփում	Դիահերձման և դատաբժշկական հետազոտությունների ընթացքում առաջացած վարակիչ թափոնները կարող են վտանգավոր լինել անձնակազմի համար	Թափոնների հավաքում տարանջատմամբ, փակ տարաներում, հանձնվում է լիցենզավորված կազմակերպություններին, կիրառվում են N342-Ն և N47-Ն որոշումների պահանջները
Հոտային ազդեցություն և միկրոբային աերոզոլներ	Դիահերձման ընթացքում առաջացած հոտերը կարող են ազդել ներքին օդի որակի վրա	Կիրառվում է բազմաստիճան օդափոխության և ֆիլտրման համակարգ՝ մուտքային և ելքային օդի ֆիլտրացիայով
Քիմիական նյութերի օգտագործում	Ֆորմալին, դիսինֆեկտանտներ և այլ քիմիական նյութեր կարող են առաջացնել շնչառական զրգռումներ	Օգտագործվում են նվազ վտանգավոր նյութեր՝ համաձայն առողջապահական նորմերի, կիրառվում է տեղային արտահոսքային օդափոխություն
Աշխատանքային սթրես և հոգեբանական ազդեցություն	Դիահերձարանային անձնակազմի մասնագիտական	Աշխատանքի ռեժիմի նորմավորում, պարբերական հոգեբանական աջակցություն,

	հոգեբանական բեռնվածություն	հանգստի պայմանների ապահովում
Խմելու և տեխնիկական ջրի անվտանգություն	Ջրամատակարարման համակարգում միկրոբիոլոգիական աղտոտման վտանգ	Նախատեսված է ջրի պարբերական լաբորատոր վերահսկում և պահուստային տարողություն (50մ ³)

Ամփոփ գնահատական

- Առողջապահական ռիսկերը հիմնականում **կառավարվող են**,
- Բոլոր վտանգավոր գործոնների նկատմամբ սահմանվել են հսկողության մեխանիզմներ,

Նախագիծը չի առաջացնում մարդկանց առողջության վրա էական բացասական ազդեցություն, եթե իրականացվում են ՇՄԱԳ հաշվետվությամբ նախատեսված կանխարգելիչ և տեխնիկական միջոցառումները:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շին աշխատողների սանիտարակենցաղային պայմանները պետք է ապահովեն նրանց առողջությունը ու անվտանգությունը՝ հաշվի առնելով աշխատանքի բնույթը, վայրի կլիմայական պայմանները և շրջակա միջավայրը: Շինարարության փուլում աշխատողների սանիտարահիգիենիկ պայմաններն ապահովել համաձայն ՀՀ Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

Անվտանգության և սանիտարական պայմաններ Հիմնական պահանջները

Աշխատակիցներին պետք է տրամադրվեն պաշտպանիչ հանդերձանք (պաշտպանիչ արտահագուստ, սաղավարտ, ձեռնոցներ, ակնոցներ, դիմակներ)՝ կախված աշխատանքների բնույթից և ֆիզիկական ռիսկերից:

Աշխատավայրում պետք է լինի առաջին բուժօգնության դեղատուփ, ինչպես նաև հրշեջ անվտանգության անհրաժեշտ միջոցներ:

Աշխատանքի ընթացքում պետք է պահպանվեն հիգիենայի կանոնները՝ ապահովելով ձեռքերի լվացման կամ ախտահանման հնարավորությունը:

Պետք է պարբերաբար իրականացվեն աշխատավայրի սանիտարական ստուգումներ: Աշխատակիցների համար լոգախցիկներ չեն նախատեսվում: Տարածքում կտեղադրվի մեկ բիոտուալետ:

10. Կլիմայական ռիսկեր և աղետների կառավարում

Աղետների կառավարման համար ըստ աղետների տեսակների, դրանց հավանական ռիսկի մակարդակների և առաջարկությունների մասին ներկայացված է աղյուսակում:

Աղետի տեսակները	Առկա տվյալները	Առաջարկություններ
Գետերի վարարում; Վտանգի մակարդակը. Շատ ցածր.	Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանում գետերի վարարման վտանգը դասակարգվում է որպես շատ ցածր՝ հիմնվելով այս գործիքի համար ներկայումս հասանելի ջրհեղեղի մոդելավորված տեղեկատվության վրա: Սա նշանակում է, որ 1%-ից պակաս հավանականություն կա, որ պոտենցիալ վնասաբեր և կյանքին սպառնացող գետերի վարարումները տեղի կունենան առաջիկա 10 տարում: Հիմնվելով այս տեղեկատվության վրա, հեղեղումների վտանգը այս նախագծի համար պետք չէ դիտարկել: Քաղաքային և գյուղական վայրերում մակերևութային հեղեղումների վտանգը ներառված չէ այս վտանգի դասակարգման մեջ և կարող է նաև հնարավոր լինել այս վայրում:	
Բնակավայրերի հեղեղում; Վտանգի մակարդակը. Միջին.	Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանում բնակավայրերի հեղեղման վտանգը դասակարգվում է որպես միջին՝ ըստ տվյալ պահին առկա տեղեկատվության: Սա նշանակում է, որ առաջիկա 10 տարիների ընթացքում բնակավայրերում ջրհեղեղների հավանականությունը, որոնք կարող են վտանգավոր և կյանքին սպառնացող լինել, ավելի քան 20%- է: Ծրագրի պլանավորման որոշումները, նախագծումը և շինարարության մեթոդները ընտրելիս պետք է հաշվի առնեն քաղաքային ջրհեղեղի վտանգի մակարդակը:	Պլանավորել աշխատակիցների և աշխատանքների իրականացման վայրի ժամանակավոր տեղափոխման սցենարներ, Վաղ Ազդարարման գործողություններ

		համակարգի մասին տեղեկացված լինել:
Երկրաշարժ; Վտանգի մակարդակը. Միջին. 	Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանում երկրաշարժի վտանգը դասակարգվում է որպես միջին՝ ըստ տվյալ պահին առկա տեղեկատվության: Սա նշանակում է, որ առաջիկա 50 տարում նախատեսվող գործունեության տարածքում պոտենցիալ վնասաբեր երկրաշարժի 10% հավանականություն կա: Այս տեղեկատվության հիման վրա երկրաշարժի ազդեցությունը պետք է հաշվի առնել ծրագրի բոլոր փուլերում: Ծրագրի նախագծման, կազմման և հետագա շահագործման մեթոդները պետք է հաշվի առնեն երկրաշարժի վտանգի մակարդակը:	Քանի որ նախատեսվող գործունեությունը երկհարկանի շինության մասին է, այս աղետի ռիսկերի կշիռը նվազում է:
Սողանքներ; Վտանգի մակարդակ. Միջին. 	Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանում սողանքային զգայունությունը դասակարգվում է որպես միջին՝ ըստ տվյալ պահին առկա տեղեկատվության: Սա նշանակում է, որ այս տարածքն ունի առատ տեղումների դեպքեր, տեղանքի թեքություն, երկրաբանություն, հող, հողածածկ և (հնարավոր) երկրաշարժեր, որոնք տեղայնացված սողանքները դարձնում են հազվադեպ վտանգավոր երևույթ: Այս տեղեկատվության հիման վրա պլանավորման որոշումները, ինչպիսիք են նախագծի տեղակայումը, նախագծի կազմման և շինարարության մեթոդները, պետք է հաշվի առնեն սողանքների հավանականությունը: Կլիմայի փոփոխության ազդեցությունը. այն, ամենայն հավանականությամբ, կփոխի թեքության և հիմնաքարի կայունությունը տեղումների և/կամ ջերմաստիճանի փոփոխության միջոցով: Դժվար է որոշել խոշոր ժայռային զանգվածների սողանքի ապագա գտնվելու վայրը և ժամանակը, քանի որ դրանք կախված են տեղական երկրաբանական պայմաններից և այլ ոչ կլիմայական գործոններից:	Քանի որ նախատեսվող գործունեության տարածքում սողանքային ակտիվ գոտիներ չեն հայտնաբերվել այն այս փուլում էական ռիսկ չի ներկայացնում:
Հրաբուխներ; Վտանգի մակարդակը. Միջին.	Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանում հրաբխային վտանգը դասակարգվում է որպես միջին՝ ըստ տվյալ պահին առկա տեղեկատվության: Սա նշանակում է, որ ընտրված տարածքը գտնվում է հրաբխից 50 կմ-ից պակաս հեռավորության վրա, որի համար պոտենցիալ վնասակար ժայթքում է գրանցվել վերջին 10000	Վաղ Ազդարարման գործողությունն երի համակարգի մասին տեղեկացված լինել: Գործել

	տարում, և որ ապագայում հնարավոր են վնասակար ժայթքումներ: Այս տեղեկատվության հիման վրա հրաբխի ժայթքման ազդեցությունը պետք է հաշվի առնել ծրագրի բոլոր փուլերում, մասնավորապես՝ նախագծի կազմման, իրականացման ժամանակ:	համաձայն ՀՀ-ում առկա աղետների կառավարման ընթացակարգերի:
Ջրի սակավություն: Վտանգի մակարդակը. Ցածր 	Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանում ջրի սակավությունը դասակարգվում է որպես ցածր՝ ըստ ներկայումս հասանելի տեղեկատվության: Սա նշանակում է, որ առաջիկա 10 տարում երաշտ կլինի 1%-ով: Այս տեղեկատվության հիման վրա պետք է հաշվի առնել երաշտի ազդեցությունը ծրագրի բոլոր փուլերում, մասնավորապես՝ դրա ազդեցությունը անձնակազմի և շահագրգիռ կողմերի վրա, ինչպես նաև ենթակառուցվածքների նախագծման ժամանակ: Ծրագրի պլանավորման որոշումները, նախագծման մեթոդները կարող են հաշվի առնել երաշտի վտանգի մակարդակը:	
Ծայրահեղ շոգ Վտանգի մակարդակը. Ցածր 	Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանում ծայրահեղ ջերմային վտանգը դասակարգվում է որպես ցածր՝ ներկայումս հասանելի մոդելավորված ջերմային տեղեկատվության հիման վրա: Սա նշանակում է, որ ավելի քան 5%-ից մինչև 25% հավանականություն կա, որ առաջիկա հինգ տարում տեղի կունենա ծայրահեղ շոգ երկարատև ազդեցության առնվազն մեկ շրջան, որը կհանգեցնի ջերմային սթրեսի: Ծրագրի պլանավորման որոշումները, նախագծման և իրականացման մեթոդները պետք է հաշվի առնեն ծայրահեղ վտանգի մակարդակը: Համաձայն Կլիմայի փոփոխության միջկառավարական հանձնաժողովի (IPCC, 2013) ամենավերջին գնահատման զեկույցի, ջերմոցային գազերի շարունակական արտանետումները կհանգեցնեն հետագա տաքացմանը, և գործնականում հստակ է, որ առաջիկա հիսուն տարիների ընթացքում ցամաքային տարածքների մեծ մասում կլինեն ավելի հաճախակի տաք ջերմաստիճան: Տաքացումը տարածաշրջանային միատեսակ չի լինի. Նախատեսվող գործունեության տարածքում ջերմաստիճանի աճը առաջիկա հիսուն տարիների ընթացքում մի փոքր ավելի բարձր կլինի, քան համաշխարհային միջինը:	
Հրդեհներ; Վտանգի մակարդակ. Բարձր	Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանում անտառային հրդեհների վտանգը դասակարգվում է որպես բարձր՝ ըստ հասանելի տեղեկատվության: Սա նշանակում է որ ավելի քան 50% հավանականություն կա եղանակային պայմանների հանդիպելու որը կարող է նպաստել զգալի անտառային հրդեհի, որը կարող է	Ստուգել տեղական ինքնակառավարման մարմինների և տարածքային կառավարման մարմինների

	հանգեցնել ինչպես կյանքի, այնպես էլ գույքի կորստի տվյալ տարվա ընթացքում: Այս տեղեկատվության հիման վրա անտառային հրդեհի ազդեցությունը պետք է հաշվի առնել ծրագրի բոլոր փուլերում, մասնավորապես նախագծման և իրականացման ժամանակ: Ծրագրի պլանավորման որոշումները պետք է հաշվի առնեն անտառային հրդեհների վտանգի բարձր մակարդակը: Պետք է նկատի ունենալ, որ վնասը կարող է առաջանալ ոչ միայն կրակի և ճառագայթման անմիջական ազդեցության հետևանքով, այլ նաև կարող է ներառել փոթորիկ և ցածր մակարդակի մակերեսային հրդեհ: Ծայրահեղ հրդեհային եղանակի դեպքում ուժեղ քամիները և քամուց առաջացած բեկորները կարող են թուլացնել ենթակառուցվածքի ամբողջականությունը: Խելամիտ կլիմի դիտարկել այս ազդեցությունը նախագծի բոլոր փուլում:	կողմից մշակված անտառային հրդեհների վտանգի վերաբերյալ գործող պլանները: Նախագգուշացման և տարհանման գոյություն ունեցող պլանների պահանջը ներդնել ծրագրի ամբողջ ընթացքում.
---	---	--

11. Շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասի գնահատում

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է՝ արտահայտված դրամական համարժեքով: Տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է շրջակա միջավայրին հասցվող վնասը դրամային ցուցանիշներով գնահատելու համար: Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի, բնությանը հասված տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է համաձայն «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի»՝ հաստատված 21.01.2005թ. թիվ 91-Ն ՀՀ կառավարության որոշման: Նախատեսվող գործունեությունից արտանետումների հետևանքով մթնոլորտի վրա հասցված տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$Ա = \sum q_i \Phi q_i \cdot \Phi_i \cdot \Phi_i (1),$$

Ա - ազդեցությունն է, արտահայտված ՀՀ դրամներով

Շq - աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն

արտահայտող գործակիցն է, որը վերցվում է համաձայն նշված կարգի 9 աղյուսակի:
 Վ_i - i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող
 մեծությունն է, որի արժեքը հաշվարկվում է համաձայն մեթոդակարգի 10 և 11 կետերի:
 Ք_i -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,
 Փ_g-ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով
 բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Մեթոդակարգի համաձայն,
 Փ_g = 1000 դրամ:

Ք_i գործակիցը որոշվում է 5-րդ բանաձևով՝

$$\text{Ք}_i = q * \text{SUI} \quad (5)$$

SUI - i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

q - գործակից, q=1՝ անշարժ աղբյուրների համար, q=3՝ շարժական
 աղբյուրների (ավտոտրանսպորտի) համար:

SUI - i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Նախատեսվող գործունեությունից արտանետումների հետևանքով շրջակա
 միջավայրին հասցված տնտեսական վնասի հաշվարկը բերված է աղյուսակում:

Արտանետումներից շրջակա միջավայրին հասցված տարեկան տնտեսական
 վնասը գնահատվում է 242650 ՀՀ դրամ:

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Շգ	Փ _g	Վ _i	Տնտեսական վնասը. ՀՀ դրամ
	SUI	q	Ք _i =SUI x q				
Փոշի	0.05	1	1.066	8	1000	10	4264
NO _x	3	1	0.650	8	1000	12.5	195000
CO	15.8	1	0.335	8	1000	1	42344
C _x H _y	0.12	1	0.146	8	1000	3.0	420.5
Մուր	0.036	1	0.052	8	1000	41.5	621.5

12. ՇՄ-ի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր

Բնապահպանական միջոցառումների ծրագիրը թույլ կտա գնահատել և վերահսկողության տակ պահել հավանական շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում:

Բնապահպանական վտանգներ ու ազդեցություններ		
	Այո / Ոչ	Նշումներ
Մթնոլորտային օդի որակ	Այո Շինարարության ընթացքում սպասվում է մթնոլորտային օդի որակի փոփոխություն: Շինարարության ամբողջ ընթացքում: Շահագործման փուլում սպասվում է վնասակար նյութերի արտանետումներ բնական գազի այրման արդյունքում: Շահագործման ամբողջ ընթացքում:	Բնապահպանական ռիսկերից խուսափելու համար պետք է կիրառվեն մեղմացնող միջոցառումներ: Մասնավորապես 1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով: 2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ: 3) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով: 4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս: 5) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ: 6) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով: 7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:
Աղմուկի մակարդակների վրա	Այո Աղմուկի մակարդակը կփոփոխվի, անհրաժեշտություն կառաջանա պարբերաբար չափել աղմուկի մակարդակը: Շինարարության ամբողջ ընթացքում:	Շինարարության ընթացքում աղմուկի առաջացումը բնակավայրերի մոտակայքում պետք է սահմանափակվի աշխատանքային ժամերով: Աշխատանքի ընթացքում պետք է օգտագործվեն փակ/ծածկված գեներատորներ, օդի կոմպրեսորներ և այլ մեխանիկական սարքավորումներ, սարքավորումները պետք է տեղադրվեն բնակելի տարածքներից և ճամբարներից հեռավորիս հեռու:

	Շահագործման փուլում չի դիտարկվում:	
Հողի որակ	Այո Շինարարության ընթացքում սպասվում է հողի որակի փոփոխություն: Շինարարության ամբողջ ընթացքում: Շահագործման փուլում չի դիտարկվում:	Հողի բերրի շերտը պետք է պահպանվի ազգային օրենսդրության կարգավորումներին համապատասխան: Ավելցուկային հողահանույթը պետք է պահպանվի պատշաճ, և օգտագործվի հետագայում տարածքների վերականգնման համար:
Ջրի որակ	Այո Որոշակի ազդեցություններ կգրանցվեն գրունտային ջրերի վրա՝ շինարարության փուլում, անհրաժեշտություն կառաջանա պարբերաբար կատարել ջրի անալիզ: Շինարարության ամբողջ ընթացքում: Շահագործման փուլում ջրային արտահոսքերը կառավարվելու է Բերդի բժշկական կենտրոնի համակարգում: Այլ պայման չկա: Շահագործման ամբողջ ընթացքում:	Վառելիքի, քսայուղերի կամ այլ թունավոր և վտանգավոր նյութերի պատահական արտահոսքը կանխելու և դրա առաջացման դեպքում ճիշտ գործելու նպատակով, պետք է մշակվեն հատուկ կանոնակարգեր: Շինարարական մեքենաները և սարքավորումը պետք է լվացվեն հատուկ այդ նպատակով սահմանված վայրերում, որտեղից ջրի արտահոսքը չի առաջացնի մակերևութային բնական ջրերի աղտոտում: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:
Կենսաբազմազանություն	Այո Որոշակի ազդեցություններ կգրանցվեն կենսաբազմազանության վրա՝ շինարարության փուլում: Շինարարության ամբողջ ընթացքում:	Խստորեն վերահսկել բուսականության մաքրման աշխատանքները /եթե դա առկա է/՝ նախատեսված գոտուց դուրս ազդեցությունները կանխելու համար: Շինարարական հրապարակի մոտակայքում խոշոր ծառերը պետք է ուսումնասիրվեն և հաշվառվեն, խոշոր ծառերը պետք է մակնշվեն և ցանկապատվեն, արմատային համակարգը պետք է պաշտպանվի և բացառվի ծառերին վնաս հասցնելը: Տարածքի բարեկարգման համար պետք է օգտագործել տարածաշրջանին բնորոշ տեսակներ, ինվազիվ տեսակների տունկը պետք է բացառել:
	Կենդանական աշխարհի վրա ազդեցություն:	Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կենդանական աշխարհի բնադրավայրերի և/կամ միգրացիոն ուղիների դեպքերը պետք է գրանցվեն, տեղեկատվությունը տրամադրվի պատասխանատու մարմիններին
Կենսական միջավայր	Այո	Սահմանափակել տրանսպորտային միջոցների տեղաշարժը և տեղակայումը ծրագրի տեղամասին հարող տարածքներում:

այրի վրա	Որոշակի ազդեցություններ կգրանցվեն կենսական միջավայրի վրա՝ շինարարության փուլում: Շինարարության ամբողջ ընթացքում:	Հողային աշխատանքները կատարել հատուկ մշակված ժամանակացույցով, ինչը թույլ կտա կանխել հողային աշխատանքները կենդանիների ձմեռման և վերարտադրության ընթացքում:
Կարմիր գրքում գրանցված տեսակներ	Քիչ հավանական է Շին աշխատանքների իրականացման փուլում Կարմիր գրքում գրանցված տեսակների հայտանքերում:	Կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում պետք է իրականացնել տեսակի պաշտպանության միջոցառումներ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:
Կլիմայի փոփոխություն	Ոչ Շինարարության ընթացքում որևէ ազդեցություն չի գրանցվի կլիմայի փոփոխության մակարդակի վրա	
Թափոններ	Այո Շինարարական թափոններ: Շինարարության ամբողջ ընթացքում: Շահագործման փուլում բժշկական թափոնների գործածությունը : Շահագործման ամբողջ ընթացքում:	Շին թափոնների տեղակայման համար օգտվել Բերդ համայնքի առաջարկած կուտակման վայրերից: տեղափոխման պարբերականությունը 1-2 օր: Շահագործման փուլում բժշկական թափոնների գործածությունը կազավորման համար գործել «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը՝ համաձայն հավելված 1-ի: Վարակիչ բժշկական թափոնների ախտահանման/վարակազերծման եղանակը և պայմանները՝ համաձայն հավելված 2-ի: Բժշկական թափոնների անվտանգ գործածության ուղեցույցը՝ համաձայն հավելված 3-ի:
Սոցիալական ազդեցություն		
Մարդու իրավունքներ	Այո Ազդեցության ենթակա անձանց և/կամ տնային տնտեսությունների իրավունքները կարող են խախտվել ծրագրի հետևանքով	Խորհրդատվական ծառայությունների շրջանակներում կմշակվեն «Բողոքների մեխանիզմներ», որոնք հնարավորություն կտան ծրագրի ազդեցությանը ենթարկված անձանց վերհանելու և լուծելու իրենց մտահոգող խնդիրները:
Սոցիալ-տնտեսական կարգավիճակին	Այո Ծրագրի իրականացման արդյունքում կբարելավվի ծրագրի շահառու համայնքների սոցիալ-տնտեսական կարգավիճակը	Շինարարական փուլում և շահագործման փուլում կպահանջվի մարդակին ռեսուրսներ, որոնք կլրացվեն տեղական աշխատաշուկայի առկա առաջարկով, անհնարինության դեպքում միայն կներգրավվեն հարակից համայնքներում առկա ռեսուրսները:

Աշխատակիցների անվտանգության և առողջության պաշտպանություն	Այո Շինարարական աշխատանքների ընթացքում առկա են վտանգներ աշխատակիցների համար	Աշխատանքի անվտանգության ռիսկերից խուսափելու համար կկիրառվեն մեղմացնող միջոցառումները: Մասնավորապես • Կբարձրացվի իրազեկվածությունը շինարարական աշխատանքների ժամանակ բացասական ազդեցությունների վերաբերյալ, • 18 տարեկանից ցածր աշխատուժի օգտագործումը կարգելվի • Բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահովված կլինի և կօգտագործի անձնական պաշտպանիչ արտահագուստ, • Բանվորները տեղամասի անվտանգության վերապատրաստում կստանան • Խոշոր սարքավորումներ աշխատեցնողները պատշաճ կերպով վերապատրաստված և լիցենզավորված կլինեն, • Շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն, • Շինարարական տեխնիկան կօգտագործվի շահագործման հրահանգների պահպանմամբ, • Շինարարական տեղամասերը ապահովված կլինեն առաջին օգնության բժշկական փաթեթներով և հակահրդեհային սարքավորումներ, • Աշխատանքային ժամերից դուրս կարգելվի գործունեությունը տեղանքում, Ակտիվ աշխատանքային տարածքները կլինեն ցանկապատված:
Միջոցների հասանելիությունը	Այո Կաճի զբոսաշրջության, ռեկրացիոն ռեսուրսների շահագործման մասնակցությունը և հասանելիությունը Ծաղկաձոր համայնքի և նրանում ներառված գյուղական բնակավայրերում	
Կենսապայմաններ	Այո Հյուրանոցային համալիրի շահագործումը կխթանի և կնպաստի տարածաշրջանի բնակչության տնային տնտեսությունների կենսապայմանների բարելավմանը	Ազդեցության ենթակա անձանց/ տնային տնտեսությունների կենսապայմանների բարելավումը կամ առնվազն ծրագրին նախորդող մակարդակի վերականգնումը կնախատեսվի շրագրի շրջանակներում: Շահագործման փուլում կաճի սննդի պատրաստման փոքր բիզնեսի պահանջարկի աճ, որը դրական ազդեցություն կունենա համայնքի համար:
Հողերի ձեռքբերում	Ոչ ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն նախատեսվող գործունեությունը իրականացվում է սեփականության	Այլ պայման չկա:

	իրավունքով հողամասի վրա:	
Գենդերային հարցերին	Ոչ Ծրագիրը չի հանգեցնի գենդերային անհավասարության խթանման	
Մշակութային ժառանգության ը	Ոչ Ծրագրի իրականացման անմիջական տարածքում առկա չեն պատմամշակութային հուշարձաններ	Մշակութային արտեֆակտների հայտնաբերման դեպքում, ընկերությունը պարտավոր է գործել համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:
Համայնքի առողջության ու անվտանգության	Այո Շինարարության ընթացքում հնարավոր են ազդեցություններ համայնքի առողջության և անվտանգության վրա	Շինարարության փուլում հավանական ազդեցությունները համայնքի առողջության և անվտանգության վրա կգնահատվեն համապատասխան խորհրդատուի կողմից և կառաջարկվեն միջոցառումներ դրանցից խուսափելու կամ հնարավորինս մեղմացնելու նպատակով, մասնավորապես հանրային իրազեկման բարձրացման միջոցով:
Մասնակցությանը որոշումներ կայացնելու գործընթացին	Ոչ Ծրագիրը չի հանգեցնի առանձին անհատների և/կամ խմբերի որոշումներ կայացնելու գործընթացին մասնակցության մակարդակի վրա	
Կառուցման տարածքի սողանքային ռիսկերի	Այո Կառուցապատման տարածքը գտնվում է սողանքային գոտում (սողանքի կենտրոնի կոորդինատներն են՝ լայնություն - 40°52'36", երկայնություն - 45°22'47"), հետևապես, համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի 9-րդ բաժնի	- Տեկտոնական խզվածքներին հարող, խորքային ֆիզիկաերկրաբանական և տեխնածին գործընթացներով ուղեկցվող բարդ ինժեներաերկրաբանական պայմաններով (նստումային, ուռչող, սառցափքվող, էլովիալ, աղակալված, լիցքային, ողաղալցված, ջրահագեցած կենսածին գրունտներ և տիղմեր, սողանքային, քարաթափման, սելավային գոտիներ, ներքնամշակվող, կարստային տարածքներ) բնութագրվող տարածքները, ինչպես նաև 15⁰-ից ավելի թեքությամբ լանջերը, ըստ սեյսմիկ հատկությունների՝ IV կարգի գրունտներից կազմված տեղամասերը, որտեղ հիմնատակի բնական դեֆորմացիոն ազդեցության (անկախ առաջացման պատճառներից և մեխանիզմից) հնարավոր զուգակցումը սեյսմիկ ազդեցությունների հետ հանգեցնում է շինարարության համար կրկնակի բարդ պայմանների ստեղծմանը, շինարարության համար անբարենպաստ հրապարակներ են: - Անբարենպաստ հողատարածքներում շենքերի և շինությունների (կառուցվածքների) շինարարության դեպքում անհրաժեշտ է նախատեսել հիմնատակի ամրապնդման համապատասխան միջոցառումներ (այդ թվում վտանգավոր երկրաբանական երևույթներից տարածքի ինժեներական պաշտպանություն) և կիրառել հիմնատակի անհավասարաչափ

		դեֆորմացիաների նկատմամբ հարմարեցված ու երկրաշարժադիմացկունության բարձրացմանը նպաստող կոնստրուկտիվ լուծումներ: - Առանձին բարձրադիր հարթակների վրա (բլուրներ, լեռնապարներ և այլն) կամ 15⁰-ից ավելի թեքությամբ լանջերին շենքերի և շինությունների (կառուցվածքների) շինարարության դեպքերում գրունտների սեյսմիկ արագացման հաշվարկային մեծությունները, որոնք բերված են աղյուսակում 1-ում, պետք է ընդունել 1,2 գործակցով բազմապատկված: 15⁰-ից ավելի թեքությամբ լանջերի վրա նախագծվող շենքերի կամ շինությունների (կառուցվածքների) հատակագծային ուրվագծերը պետք է գտնվեն լանջի սահմանի (կտրման) հարթության սահմաններից դուրս, որի դիրքը որոշվում է շեպի կայունության հաշվարկով՝ հորիզոնական և ուղղաձիգ սեյսմիկ բեռնվածքի հաշվառմամբ:
--	--	--

13. Մշտադիտարկումների պլան

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակա միջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարար ման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալ առու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալ առու
Շինարարական տեխնիկայի շահագործում	Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս, համայնքում գործող մասնագիտացված կետերում	Շինհրապարակ դուրս մասնագիտացված կետերում	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալ առու

	Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում				
Հողային աշխատանքներ	Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալ առու
Իներտ շինանյութերի գնում	Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալ առու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալ առու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալ առու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Կապալ առու
Մթնոլորտային աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների վերահսկում	Արտանետվող նյութերի որակական և քանակական պարամետրերի չափումներ,	Շինհրապարակ	Մասնագիտացված լաբորատորիայի ներգրավում	Երեք ամիսը մեկ հաճախականությամբ	Նախածեռնող

Նախատեսվող մշտադիտարկման ծրագրի իրականացման համար կանխատեսվում է մոտ 700.0 հազ. ՀՀ դրամի չափով ներդրումներ:

Շահագործման փուլում մշտադիտարկումների իրականացման օրենսդրական կամ նորմատիվային պահանջների առկայության դեպքում՝ քանի որ կենտրոնը գտնվում է արդեն գործող առողջապահական համալիրի (Բերդ բժշկական կենտրոնի) տարածքում և չի հանդիսանում առանձին արտադրական օբյեկտ, այլ լրացնում է բժշկական ծառայությունների շղթան, կարող է իրականացվել համալիր, որպես մեկ՝ բժշկական ծառայությունների տրամադրման գոտի:

Հավելված 1

	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ	 Կադաստրի կոմիտե
Սույն վկայականով հաստատվում է 15 ապրիլի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.		
1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ		
2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ Մարզ Տավուշ, համայնք Բերդ Բերդ ք. Ա. Մանուկյան փողոց 25/1 հողամաս		
3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ ՀՀ կառավարության որոշում 17.02.2022թ. N 196-Ա, Հասցե տրամադրելու մասին որոշում 14.04.2023թ. N 430-Ա		
4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ Կադաստրային ծածկագիրը՝ 11-002-0060-0123 Մակերեսի չափը (հա)՝ 0.02247 Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
ՎԿԱՅԱԿԱՆ N 21082023-11-0010, գաղտնաբառ՝ WDHAIAIBZBYW		
Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կապող է ստորագրել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով		
Էջ 1/2		

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ամրացված է ՀՀ առողջապահության նախարարությանը:
ՎԿԱՅԱԿԱՆ N 15042022-11-0047: Կատարվել է հասցեի ուղղում 21.08.2023թ.-ին:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՀԱՍՄԻԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 21082023-11-0010, գաղտնաբառ՝ WDHAIAIBZBVW

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2



Կադաստրի
կոմիտե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2022 թվականի N 196-Ա

«ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՂԻՏԱԼ ԼՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Թույլատրել «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, քաղաք Բերդ, Ա. Մանուկյան փողոց 25 հասցեում գտնվող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 04042016-11-0025) 224.7 քառ. մետր հողամասով վճարել ընկերության կողմից տեղաբաշխված՝ պետությանը պատկանող համապատասխան թվով բաժնետոմսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռքբերման դիմաց:

2. «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից ձեռք բերված բաժնետոմսերի մարման միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան չափով նվազեցնել «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը:

3. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, քաղաք Բերդ, Ա. Մանուկյան փողոց 25 հասցեում գտնվող «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 1,90537 հա հողամասից Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով առանձնացնել 224.7 քառ. մետր հողամասը (այսուհետ՝ հողամաս)՝ համաձայն հավելվածի, 40,576 դրամ հաշվեկշռային արժեքով, և այն ամրացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Տավուշի մարզի Բերդ քաղաքի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի համար նոր մասնաշենք կառուցելու նպատակով:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում ապահովել «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջների կատարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման հետ կապված կանոնադրությունում փոփոխությունների պետական գրանցումը:

2) սույն որոշման 3-րդ կետում նշված մասնաշենքը կառուցելուց հետո «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ապահովել մասնաշենքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը:

5. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշման 3-րդ կետում նշված մասնաշենքը կառուցելուց և 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքներն ավարտելուց հետո 1 ամսվա ընթացքում նորակառուցված մասնաշենքի և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի անժամկետ, անհատույց օգտագործման պայմանագիր կնքել «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ:

6. Սահմանել, որ

1) սույն որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետով և 5-րդ կետով նախատեսված աշխատանքների կատարման արդյունքում առաջացած ծախսերը ենթակա են իրականացման Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

2) սույն որոշման 1-ին կետում նշված՝ «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից հողամասի առանձնացման ժամանակ հաշվարկվող ավելացված արժեքի հարկը և շահութահարկը վճարվում են «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ մասով և 9-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի «ԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԹԻՎ 159-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ
հոդվածի 1-ին մասի 39-րդ կետով և հիմք ընդունելով «Իրավական ակտերի
մասին» ՀՀ օրենքի 27.1-ի 4-րդ կետով

Կարգադրում եմ՝

1. Բերդ համայնքում հանրային լուծման քննարկումների կազմակերպման և
անցկացման պատասխանատու նշանակել Բերդ համայնքի ղեկավարի տեղակալ՝
Մհեր Պապյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Աշխատակազմի քարտուղար՝

Մարտին Ապրեսյան

Արձանագրություն

„23.04.2025թ.,„

ք. Բերդ

Սույն թվականի ապրիլի 23-ին, ժամը՝ 12⁰⁰-ին Բերդի համայնքապետարանի ավագանու նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի պատվերով Բերդ քաղաքում երկհարկանի դիահերձարանի կառուցման՝ «Գլոբալ պրոեկտ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող նախագծի վերաբերյալ հանրային բաց քննարկում:

Օրակարգ

ՀՀ Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքում ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի պատվերով երկհարկանի դիահերձարանի կառուցման թույլտվության վերաբերյալ հանրային քննարկում:

Հանրային լուսններին ներկա էին.

- Բերդ համայնքի ղեկավարը
- Բերդ համայնքի բնակիչներ
- Բերդ համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ-ների աշխատակիցներ
- Բերդի համայնքապետարանի աշխատակիցներ
- Բերդի համայնքային գրադարանի ներկայացուցիչներ
- Բերդի Գնել Մեջլումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի աշխատակիցներ
- ՀՀ Շրջակա միջավայրի անկախ փորձագետը
- ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը

Ելույթ ունեցան

Բացման խոսքով հանդես եկավ Բերդ խոշորացված համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը՝ ներկայացնելով Բերդի համայնքապետարանի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված գործողությունները:

Հանրային քննարկումների նպատակը:

ՀՀ Շրջակա միջավայրի անկախ փորձագետ Արայիկ Ծատուրյանը ներկայացրեց նախատեսվող դիահերձարանի կառուցման առաջնահերթության և աշխատանքների կատարման ժամկետները: Մեկնաբանվեց նաև աշխատակիցներին ներկայացվող պահանջները: Ա. Ծատուրյանը մանրամասն ներկայացրեց նախագծի բոլոր փուլերը:

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի Տավուշի մարզի բաժնի վարիչ Սահակ Ավետիսյանը ներկայացրեց կառուցվող դիախերձարանի և ծրագրի իրագործման վերաբերյալ մանրամասներ:

Հանրային լսման ընթացքում.

✓ Հարցադրումով հանդես եկավ Ալինա Ալավերդյանը

Հարցին ի պատասխան Սահակ Ավետիսյանը տվեց սպառիչ պատասխան՝ պարզաբանելով բոլոր մանրամասները: Բոլոր աշխատանքները լինելու են նորմայի սահմաններում և համակարգված:

Հանրային քննարկման արդյունքում մասնակիցները հավանության արժանացրին ՀՀ Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքում ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի պատվերով երկհարկանի դիախերձարանի կառուցման նախագծերն ունենալը:

Վարող՝  Անտոնիկ Հակոբյան/Բերդ համայնքի ղեկավար/

Արձանագրող՝  Աննա Նավասարդյան /Քարտուղարության, քաղաքացիների սպասարկման և անձնակազմի կառավարման բաժնի պետ/

Մասնակիցների Ցանկ

Բերդ համայնքում հանրային խումներ 23/04/25

N	Անուն, Ազգանուն	Կազմակերպություն	Հեռախոս	Ստորագրություն
1.	Պետրոսյան Հակոբյան	Բերդ համայնք	093373033	[Signature]
2.	Վարդիկ Սարգսյան	Բերդ համայնք	093 795 415	[Signature]
3.	Սահակ Սեֆեյան 2	Բազմաբնակչության կենտրոն	093476146	[Signature]
4.	Սևակ Բաբայան	Բերդ համայնք	093680378	[Signature]
5.	Սևակյան Եղևորյան	Բերդ համայնք	077223932	[Signature]
6.	Սևակյան Վահագնյան	Բերդ համայնք	077-10-6363	[Signature]
7.	Սեդրակ Սարգսյան	Բերդ համայնք	094975497	[Signature]
8.	Համբարձումյան	Բերդ համայնք	098222944	[Signature]
9.	Եսայի Եսայան	Բերդ համայնք	093 383895	[Signature]
10.	Սևակյան Վահագնյան	Բերդ համայնք	099471547	[Signature]
11.	Եսայի Եսայան	Բերդ համայնք	093 47-68-97	[Signature]
12.	Եսայի Եսայան	Բերդ համայնք	077-48-3232	[Signature]
13.	Զեյնա Սեֆեյան	Բերդ համայնք	077-75-79-71	[Signature]
14.	Զեյնա Սեֆեյան	Բերդ համայնք	093-42-9495	[Signature]
15.	Զեյնա Սեֆեյան	Բերդ համայնք	093 22-23-88	[Signature]
16.	Համբարձումյան	Բերդ համայնք	094572747	[Signature]
17.	Սևակյան Եսայան	Բերդ համայնք	077 446 822	[Signature]
18.	Սևակյան Եսայան	Բերդ համայնք	09419-29-24	[Signature]
19.	Սևակյան Եսայան	Բերդ համայնք	093-70-66-08	[Signature]
20.	Սևակյան Եսայան	Բերդ համայնք	077585549	[Signature]

21. Սեֆեյան Վահագնյան Բերդ համայնք 094888281 [Signature]

22. Համբարձումյան Բերդ համայնք 093958512 [Signature]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19 ՄԱՅԻՍԻ 2025 թվականի «ՀՀ ԱՆ
<<ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊՈԱԿ -Ի ՊԱՏՎԵՐՈՎ
<<ԳԼՈՐԱԼ ՊՐՈԵԿՏ>> ՍՊԸ -Ի ԿՈՂՄԻՑ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԵՐԿԱՐԿԱՆԻ
ԴԻԱՀԵՐՁԱՐԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 58-Ա ՈՐՈՇՈՒՄԻՑ (ՆԻՍՏ N 5/4)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ, 51-րդ
հոդվածներով, 12-րդ հոդվածի 14-րդ մասով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով, ,,
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին,,
ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ ,ինչպես նաև ՀՀ Կառավարության 19.11.2014
թվականի N 1325 -Ն որոշմամբ սահմանված կարգի, **Բերդ համայնքի ավագանին
որոշում է՝**

1.Տալ թույլտվություն ՀՀ Տավուշի մարզի Բերդ խոշորացված
համայնքում երկհարկանի դիախերձարան կառուցելու:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԵԼԼԻ

ԲԱԴԱԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՍՏԴԻԿ

ՃՈՒՂՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒՋԱՐՅԱՆ ԱՆՆԱ

ՄԵԺԼՈՒՄՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՆԻԳՈՅԱՆ ԱՐԱՄ

ՊԱՊՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

Համայնքի ղեկավար՝  ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՆՏԵՆՍԻՎ

Ապրիլի 23-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարանում (ք. Բերդ, Լևոն Բեկի 5, 3-րդ հարկ, ավագանու նիստերի դահլիճ) կայանալու է հանրային խումբ:

ՀՀ առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ը (տնօրենի ժ/պ՝ Արթուր Պետրոսյան, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Հերացի 5/1) ներկայացրել է նախագիծ՝ ՀՀ Տավուշի մարզի Բերդ քաղաքում երկհարկանի դիսաներձարան կառուցելու վերաբերյալ:

Բերդի համայնքապետարանը, առաջնորդվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1325-Ն որոշման հավելվածով, նախաձեռնել է հանրային խումբ քաղաքացիների կարծիքը վերոնշյալ թեմայի շուրջ, արձանագրելու շահագրգիռ հանրության առաջարկություններն ու

դիտողությունները:

Շահագրգիռ հանրությունն իր առաջարկությունները և կարծիքները կարող է ուղարկել նաև էլեկտրոնային տարբերակով մինչև ապրիլի 23-ը ստորև նշված էլ. հասցեին:

Հանրային լսման կազմակերպման և անցկացման համար պատասխանատու անձ՝

Մհեր Պապյան, Բերդ համայնքի ղեկավարի տեղակալ,

էլ. հասցե՝ mher.papayan@inbox.ru, հեռ.՝ 077 55 44 54

#28(3912), 21 Մարտ 2025թ. iravunk@iravunk.com

ԻՐԱՎՈՐՆԵ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի համայնք,
Հայաստան, ՏԱՎՈՒՇ, ԲԵՐԴ, Լևոն Բեկի, Շ 5, 4201, Հեռ. (0267) 2-
10-81, (0267) 2-37-79, (0267) 2-21-21, (0267) 2-49-59,
berd.tavush@mta.gov.am

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ
ԳԻՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ
ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ**

N 1148/ԵՎ/25
20 մայիս 2025թ.


Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

Ի պատասխան Ձեր N 15/138- 19/03/2025 թվականի գրության Ձեզ ենք ուղարկում Բերդ խոշորացված համայնքում երկհարկանի դիախերճարան կառուցելու թույլտվության վերաբերյալ սույն թվականի ապրիլի 23-ին, ժամը՝ 12:00-ին ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարանի ավագանու նիստերի դահլիճում տեղի ունեցած հանրային լսումների վերաբերյալ մասնակիցների գրանցման թերթիկը, արձանագրությունը, էլեկտրոնային հիշողությունների կրիչը և Բերդ համայնքի ավագանու 19 մայիսի 2025 թվականի թիվ 58-Ա որոշումից բաղվածքը:

Հարգանքով՝

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Ա. ՀԱՎՈՐՅԱՆ

Կապ. Բաժնի պետի ժ/պ՝ Ա. Նավասարդյան




Հավելված 4






Հավելված 5



Ենթակառուցվածքներ



Հավելված 6

ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Բերդ քաղաքում ՀՀ ԱՆ «ԴԲԳԳԿ» ՊՈԱԿ-ի համար երկհարկանի դիհահերձարանի շենքի կառուցման տարածքի ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների եզրակացություն:

Կատարված հետազոտությունների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

- Ուսումնասիրվող տարածքում երկրաբանական կառուցվածքը ներկայացված է գրունտների 3 շերտով, ֆիզիկամեխանիկական բնութագրերի ընդհանրացված ցուցանիշները բերված են 1, 1.1 աղյուսակներում:

- Տեղամասում փորված պորությունների սահմաններում ստորերկրյա ջրերը բացակայում են և ըստ արխիվային նյութեր գտնվում են 10.0մ-ից խորը հատվածներում:

- Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինություն կառուցելու համար, որպես հիմնատակ առաջարկվում է

- շերտ 2-ը / ավազակավային գրունտներ /, որոնք սեյսմիկ հատկությամբ ըստ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 3-րդ կարգ են

- ✓ Գրունտի հաշվարկային դիմադրությունը $R_0 = 2.0 \text{ կգ/սմ}^2$

- ✓ ընկրկելիության գործակից $K_p = 2500 \text{ տ/մ}^3$

- Համաձայն 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max} = 0,3g$ մինչև 9 բալ սեյսմիկայնություն:

- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 40 սանտիմետր:

- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ տվյալ տարածքում բացակայում են:

- Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:



Երկրաբան՝

Հ.Տիտիզյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ
մարզ համայնք

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
N 34 06 հուլիսի 2023թ.

Օբյեկտ 11,0Մ x 12,0Մ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԵՐԿՀԱՐԿԱՆԻ ԴԻԱՀԵՐՁԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, 4-ՐԴ ՌԻՍԿԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ

(կառուցում, վերակառուցում, ուժեղացում, կապիկալ երրորդում, ամրակայում, վերականգնում, և այլն, օբյեկտի անվանումը, հակիրճ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կարգավիճակ))

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ նախագծային փաստաթղթերի մշակման համար
(նախագծման փուլերը)

Հասցեն ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ, ԲԵՐԴ ՔԱՂԱՔ, Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՐՈՑ, 25/1, ԾԱԾԿԱԳԻՐ՝ 11-002-0060-0123

Կառուցապատող ՀՀ ԱՆ ՀՀԴԱՏԱՔԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊՈԱԿ

(կազմակերպության անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը

ՎԿԱՅԱԿԱՆ՝ N 15042022-11-0047

(կառուցապատման նպատակով Հայաստանի Հանրապետության մարզաշինական, քաղաքաշինական այլ գործունեության հետ առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու օրենսդրությամբ սահմանված կարգով հորամարի պրամադրման, անշարժ գույքի փոփոխումը)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է

Բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի կազմում

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը

0,02247

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը

Չկառուցապատված

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, քարեկաթոցումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները

Տրանսպորտային մոտեցումն ապահովված է

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

6. (*) Կից հողամասեր

Բերրի բժշկական կենտրոնի տարածք

(կից հողաօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համապատասխան ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

չկան

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

(տեղանքում գործող արդարական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներապրոստրուկտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկարագրող սահմանափակումները, այդ թվում՝ սերվիլույթները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Նախագիծն իրականացնել ՀՀ քաղաքաշինության գործող նորմատիվ պահանջներին համապատասխան:

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպված (կազմակերպվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

ըստ նախագծի

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

ըստ նախագծի

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

մինչև 9.0մ

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառուցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

50 %-ից ավել

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

50 %-ից ավել

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

ըստ նախագծի

9.7. այլ պահանջներ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Առկա չէ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

Առկա չէ

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Առկա չէ

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Առկա չէ

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

(համաձայն կարգի 4.7-րդ կետով սահմանված նշանակության տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

(ոեյիճի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

ըստ նախագծի

(անդաճի պայմաններում վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

տուֆ, բազալտե, մամլոգրանիտե և կերամիկական սալիկներ, ե/բ. թիթեղյա ծածկ, ապակի

(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ

Ըստ օրենքով սահմանված նորմատիվ-տեխնիկական նորմերի պահանջների

(արվարձարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

Ըստ օրենքով սահմանված անվտանգության նորմերի պահանջների

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

Նախատեսվել

19. Շրջակա միջավայրի պահպանում

(շրջակա միջավայրը վրանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրը գերծ պահել շինադրի կուտակումից

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, բաղադրային լուծումների և գրանցարկի անխախտ աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

Մինչև 2024թ. դեկտեմբերի 30-ը

Ներկայացնել աշխատանքային նախագիծ

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը՝ ՀՀ կառավարության 1998 թ. Դեկտեմբերի 12-ի N 812 որոշման N 1 հավելվածի 6-րդ կետին համապատասխան)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Նախագծային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացնել ՀՀ կառավարության 19.03.2015թ. Թիվ 596-Ն որոշմամբ սահմանված կարգով: Ներկայացնել պետական համալիր փորձաքննություն:

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության փուլերը կամ նախագծողի նրաշխատըրագիրը՝ իրում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

(իրավասու մարմնի հետ կամ բաղադրաչինական խորհրդում նախագծային նյութերի նախնական համաձայնեցում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացքում և կարգով)

25. Համաձայնեցումներ

(նշվում են փոխ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ փաղորված մարմինների հետ, ինչպես նաև կարգի 4.8-րդ կետով սահմանված ընթացքում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականադիրը (օգտագործողի) հետ)

27. Այլ պայմաններ

ՀՀ կառավարության 19.03.2015թ.թիվ 596-Ն որոշման համաձայն անհրաժեշտ փաստաթղթեր:
Շինարարության ավարտի ժամկետը կնախատեսվի շինարարության թույլտվությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈՐԲԱՆ

Կ. Տ.